

**Դատական գործ N: ՎԴ/2075/05/09**

<b>Հայցադիմումը /դիմումը/ ստացվել է:</b>	04-05-2009
<b>Հայցվոր/դիմող</b>	
Անուն:	ԻՆՏԵՐՕՅԼ ՍՊԸ
Հասցե:	ՌԴ Մոսկովյան մարզ,Լենինսկի շրջան Կալուժսկոյե մայրուղի 21կմ
<b>Ներկայացուցիչ</b>	
Անուն	Արա
Ազգանուն	Զոհրաբյան
Հասցե	Արշակունյաց 17
<b>Պատասխանող</b>	
Անուն:	ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալություն
Հասցե:	Կառավարական տուն 3
<b>Քաղաքացիական գործի ստացման կարգը:</b>	Առաջին անգամ
<b>Ինքնուրույն պահանջ ներկայացնող:</b>	
<b>3-րդ անձ</b>	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
<b>Պահանջ:</b>	պետական մարմնի ակտն անվավեր ճանաչելու պ/մ
<b>Հիմնական պահանջի վիճակագրության տողի համարը:</b>	1.1
<b>Պետական տուրք:</b>	4000
<b>Պատասխանի ստացման ամսաթիվը:</b>	
<b>Հակընդդեմ հայցի ներկայացման ամսաթիվը:</b>	
<b>Հակընդդեմ պահանջ:</b>	
<b>Պետական տուրք:</b>	
<b>Ամսաթիվ:</b>	07-05-2009
<b>Նախագահող դատավոր</b>	
Դատարանի անվանում:	Վարչական
Դատավորի անուն:	Արծրուն Միրզոյան
<b>Դատավոր</b>	
Դատարանի անվանում:	Վարչական
Դատավորի անուն:	

Որոշման ամսաթիվ:	14-05-2009
Դատաքննության ամսաթիվ:	09-07-2009
Ծանուցագիրը ուղարկվել է:	16-06-2009
Այլ նշումներ:	
Ժամ:	
Դատաքննության ամսաթիվ:	28-10-2009
Ծանուցագիրը ուղարկվել է:	10-09-2009
Այլ նշումներ:	
Ժամ:	12:30
Նիստերի դահլիճի համար:	106
Դատաքննության ամսաթիվ:	13-11-2009
Ծանուցագիրը ուղարկվել է:	28-10-2009
Այլ նշումներ:	
Ժամ:	11:00
Նիստերի դահլիճի համար:	106
Դատաքննության ամսաթիվ:	07-12-2009
Ծանուցագիրը ուղարկվել է:	13-11-2009
Այլ նշումներ:	
Ժամ:	14:30
Նիստերի դահլիճի համար:	106
Դատաքննության ամսաթիվ:	21-12-2009
Ծանուցագիրը ուղարկվել է:	16-12-2009
Այլ նշումներ:	
Ժամ:	14:40
Նիստերի դահլիճի համար:	106
Դատաքննության ամսաթիվ:	29-12-2009
Ծանուցագիրը ուղարկվել է:	21-12-2009
Այլ նշումներ:	
Ժամ:	11:30
Նիստերի դահլիճի համար:	106
Դատաքննության ամսաթիվ:	15-01-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	29-12-2009
Այլ նշումներ:	
Ժամ:	12:30
Նիստերի դահլիճի համար:	106

Դատաքննության ամսաթիվ:	01-02-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	15-01-2010
Այլ նշումներ:	
Ժամ:	17:40
Նիստերի դահլիճի համար:	106
Դատաքննության ամսաթիվ:	17-02-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	08-02-2010
Այլ նշումներ:	
Ժամ:	14:00
Նիստերի դահլիճի համար:	106
Դատաքննության ամսաթիվ:	04-03-2010
Ծանուցագիրը ուղարկվել է:	17-02-2010
Այլ նշումներ:	
Ժամ:	17:50
Նիստերի դահլիճի համար:	106
Հայցի լուծման ամսաթիվ:	04-03-2010
Հայցի լուծումը:	Բավարարվել է
<b>Հոդված</b>	
Հոդված	ՀՀ վարչ. դատ. օր-ի 59, 112-115,118
Հակընդդեմ հայցի լուծումը :	
Հակընդդեմ հայցի լուծման ամսաթիվ:	
Այլ նշումներ:	
Դատական ակտ:	<p>Վարչական գործ թիվ ԿՂ/2075/05/09</p> <p>Վ Ճ Ի Ռ  ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  «04» մարտի 2010թ. ք. Երևան  Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը, հետևյալ կազմով՝  նախագահությամբ՝ դատավոր Ա. Միրզոյանի,  քարտուղարությամբ՝ Ք. Զոհրանյանի  մասնակցությամբ՝  հայցվոր՝ «ԻՆՏԵՐՕՅԼ» սահմանափակ ներկայացուցիչներ՝  պատասխանատվությամբ ընկերության Արա Զոհրաբյան,  (142704, ՌԴ, Մոսկովյան մարզ, Գնել Մուղնեցյան,  Լենինսկի շրջան, Կալուժսկոյե  մայրուղի 21 կմ, ՀՎՀՀ 7713324346,  պետ. գր. 1027713003560),</p> <p>պատասխանող՝ Հայաստանի Հանրապետության  ներկայացուցիչներ՝  Էկոնոմիկայի նախարարության Արա Աբգարյան,</p>

մտավոր սեփականության Արմեն Տոնիկյան,  
գործակալության  
/բողոքարկման խորհուրդ/  
(ՀՀ, 0010, ք. Երևան, Գլխավոր պող.,  
Կառավարական տուն 3),

Երրորդ անձ՝ «Կրեատիվ» փակ բաժնետիրական  
ներկայացուցիչներ՝  
ընկերության Էդուարդ Նահապետյան,  
(Ուկրաինա, ք. Կիրովոգրադ, Լիանա Յորդանյան,  
Պրոմիշլենի պող. 19),

դռնբաց դատական նիստում՝ 17.02.2010թ., քննեց վարչական գործն  
ըստ հայցի «ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ի ընդդեմ Հայաստանի  
Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր  
սեփականության գործակալության /բողոքարկման խորհուրդ/  
Երրորդ անձ «Կրեատիվ» ՓԲԸ-ի՝ «Պետական մարմնի ակտն  
անվավեր ճանաչելու» պահանջի մասին:

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Գործի դատավարական նախապատմությունը և հայցվորի  
իրավական դիրքորոշումը  
«ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ն հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական  
դատարան ընդդեմ Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի  
նախարարության մտավոր սեփականության գործակալության  
/բողոքարկման խորհուրդ/, երրորդ անձ «Կրեատիվ» ՓԲԸ-ի՝  
«Պետական մարմնի ակտն անվավեր ճանաչելու» պահանջի մասին  
և հայտնել, որ մինչ «ԺԼԹԿԺ» բառային ապրանքային նշանը  
Հայաստանի Հանրապետությունում գրանցելը Ռուսաստանի  
Ղաշնության ռեգիոնտ «Ինտերոյլ» ՍՊԸ-ն այն օգտագործել և  
գրանցել է ԱՊՀ այլ երկրներում (Բելառուսիա, Ուկրաինա,  
Ղազախստան):

«ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ի և ուկրաինական «Կրեատիվ» ՓԲ ընկերության  
միջև 14.04.2007թ. կնքվել է ապրանքային նշանի օգտագործման  
իրավունքի փոխանցման պայմանագիր, որով «ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ն  
ուկրաինական «Կրեատիվ» ՓԲ ընկերությանը բացառիկ իրավունք է  
տրամադրել նաև ԱՊՀ երկրներում օգտագործել «ԺԼԹԿԺ» բառային  
ապրանքային նշանը:

Հայաստանի Հանրապետությունը անդամակցում է Անկախ  
Պետությունների Համագործակցությանը (հանդիսանում է ԱՊՀ  
երկիր):

10.07.2008թ. ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր  
սեփականության գործակալության կողմից «ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ի  
անվամբ գրանցվել է «ԺԼԹԿԺ» բառային ապրանքային նշանը  
(գրանցման թիվ 13021) 12.11.2007թ. առաջնությամբ:

«Կրեատիվ» ՓԲԸ-ն 16.08.2008թ. ՀՀ էկոնոմիկայի նախարարության  
մտավոր սեփականության գործակալության բողոքարկման  
խորհրդին բողոք է ներկայացրել «ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ին  
պատկանող «ԺԼԹԿԺ» գրանցման թիվ 13021 բառային  
ապրանքային նշանի գրանցման դեմ:

Ի առարկուն բողոքի «ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ն ՀՀ էկոնոմիկայի  
նախարարության մտավոր սեփականության գործակալության  
բողոքարկման խորհրդին է ներկայացրել պայմանագիրը և  
Վրաստանում տեղի ունեցած ցուցահանդեսի վերաբերյալ  
պաշտոնական ինտերնետային կայքից քաղվածք, ըստ որի  
«Կրեատիվ» ՓԲ ընկերությունը որպես ցուցահանդեսի մասնակից  
նշված չէ:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության  
գործակալության բողոքարկման խորհուրդը 2008 թվականի  
նոյեմբերի 4-ի թիվ 27/08 որոշմամբ «Կրեատիվ» ՓԲԸ-ի բողոքը  
բավարարել է և «ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ի անվամբ գրանցված  
«ԺԼԹԿԺ» բառային ապրանքային նշանի գրանցումը (գրանցման

թիվ 13021) ամբողջովին ճանաչել է անվավեր:  
Որոշման կայացման համար հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ իբրև առկա է «Կրեատիվ» ՓԲ ընկերության կողմից հայտարարված «ՃԼԹԾԿԺ» ապրանքային նշանի ցուցահանդեսային առաջնություն 04.10.2007 թվականի դրությամբ, որը «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն է հանդիսանում է ցուցահանդեսային առաջնության թվականը:  
2007թ. հոկտեմբերի 4-6-ը Կրաստանում տեղի ունեցած ցուցահանդեսը կազմակերպել են երկու կազմակերպություններ՝ «ITE Group PLC» և «Iteca Kavkasia» ընկերությունները, իսկ ցուցահանդեսի մասնակցության փաստն ամրագրվել է ինչպես ինտերնետային կայքում, այնպես էլ՝ կատալոգում:  
«ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ն 09.02.2009թ. հարցում է կատարել ցուցահանդեսի մյուս կազմակերպիչ «ITE Group PLC» ընկերությանը, որին ի պատասխան 24.02.2009թ. «ITE Group PLC» ընկերությունը հայտնել է, որ իրենց մոտ եղած պաշտոնական կատալոգում ցուցահանդեսի մասնակիցների շարքում «Կրեատիվ» անվանմամբ ընկերություն նշված չէ:  
Կրաստանի Հանրապետության քաղաքացի Վալենտինա Սեմիլետը, ով ցուցահանդեսի կազմակերպման ժամանակ հանդիսացել է «Իտեկա-Կավկասիա» ՍՊԸ-ի առևտրական նախագծի ղեկավարը, նոտարական կարգով հայտարարություն է տվել այն մասին, որ տվյալ ցուցահանդեսում «Կրեատիվ» ՓԲԸ կազմակերպություն չի մասնակցել:  
Հայտնել է, որ որոշմամբ խախտվել են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների և իրավական ակտերի ստորև վկայակոչված նորմերով ամրագրված «ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ի իրավունքներն ու ազատությունները, մասնավորապես խոչընդոտվում է «ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ի՝ վիճարկվող բառային ապրանքային նշանի օգտագործմամբ ազատ տնտեսական գործունեությամբ զբաղվելու իրավունքի իրացումը՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով հանդերձ, հետևյալ պատճառաբանությամբ.  
Վիճարկվող ակտի կայացման համար ըստ էության հիմք է հանդիսացել այն փաստական հանգամանքը, որ «Կրեատիվ» ՓԲ ընկերությունը մասնակցել է 2007թ. հոկտեմբերի 4-6-ը «ITE Group PLC» և «Iteca Kavkasia» ընկերությունների կողմից Կրաստանում (Թբիլիսի, Մետեխի Պալաս Հոտել) կազմակերպած ցուցահանդեսին, ինչն էլ հիմք է հանդիսացել «ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ի կողմից «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված նորմի կիրառման համար (ցուցահանդեսային առաջնություն):  
«Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված նորմով սահմանված է. «Փարիզյան կոնվենցիայի մասնակից պետություններից մեկի տարածքում պաշտոնական կամ պաշտոնապես ճանաչված միջազգային ցուցահանդեսների ցուցանմուշների վրա տեղադրված նշանի առաջնությունը կարող է սահմանվել ցուցահանդեսում ցուցանմուշի բաց ցուցադրումն սկսելու թվականով (ցուցահանդեսային առաջնություն), եթե հայտը լիազոր մարմին է ներկայացվել այդ թվականից վեց ամսվա ընթացքում»:  
Հայցվոր կողմը հայտնել է, որ նորմի բառացի մեկնաբանության արդյունքում հանգում են այն եզրակացության, որ դրա կիրառման համար անհրաժեշտ է որոշակի փաստական հանգամանքներ.  
- Փարիզյան կոնվենցիայի մասնակից պետություններից մեկի տարածքում ցուցահանդեսի անցկացում,  
- անցկացված ցուցահանդեսը պետք է լինի պաշտոնական կամ պաշտոնապես ճանաչված միջազգային ցուցահանդես,  
- ցուցահանդեսային առաջնությունից անձը կարող է օգտվել, եթե մասնակցել է պաշտոնական կամ պաշտոնապես ճանաչված

միջազգային ցուցահանդեսին և ցուցանմուշների վրա տեղադրվել է ապրանքային նշանը,

- ցուցահանդեսին մասնակցած սուբյեկտը ապրանքային նշանի գրանցման հայտը կարող է ներկայացնել ցուցահանդեսի անցկացման թվականից հետո վեցամսյա ժամկետում:

ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 2005թ.

ապրիլի 12-ի թիվ 85-Ն հրամանով հաստատված «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգ»-ը սահմանել է ցուցահանդեսային առաջնություն սահմանելու հետ կապված վարչական մարմնի և տնտեսավարող սուբյեկտի փոխհարաբերությունները:

Վերոհիշյալ կարգի 19-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ օրենքի 6-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն հայտին կցվում են՝ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն ցուցահանդեսային առաջնություն խնդրարկելու դեպքում, հայտին կցվում է այդ պահանջի իսկությունը հաստատող փաստաթուղթը: Նշված փաստաթուղթը կարող է ներկայացվել հայտը գործակալություն ներկայացնելու թվականից երեք ամսվա ընթացքում:

Ցուցահանդեսային առաջնություն խնդրարկելու մասին հայտատուն պարտավոր է նշել հայտը ներկայացնելիս կամ հայտի ներկայացման թվականից երկու ամսվա ընթացքում:

Հայտատուի կողմից ներկայացված փաստաթուղթը պետք է հաստատի ցուցահանդեսի կարգավիճակը որպես Փարիզյան Կոնվենցիայի մասնակից որևէ պետության տարածքում

կազմակերպված պաշտոնական կամ պաշտոնապես միջազգային ճանաչված լինելը և պարունակի ապրանքը ցուցադրող անձի անվանումը, նշանը, դրանով նշված ապրանքների ցանկը, ինչպես նաև ցուցահանդեսում ցուցանմուշների բաց ցուցադրման թվականը:

Հայտատուի կողմից ներկայացված փաստաթուղթը վավերացվում է տվյալ ցուցահանդեսի վարչական մարմնի կամ կազմկոմիտեի կողմից:

Նույն կարգի 123-րդ կետի համաձայն՝ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն երրորդ և չորրորդ մասերին համապատասխան ցուցահանդեսային առաջնություն խնդրարկելու դեպքում ստուգվում են՝

1) օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջների պահպանումը.

2) ցուցահանդեսային առաջնության իրավունքը հաստատող՝ սույն կարգի 19-րդ կետի 6-րդ ենթակետով նախատեսված պահանջների համապատասխան ձևակերպված փաստաթղթի առկայությունը.

3) հայտատուի կողմից ցուցահանդեսային առաջնության խնդրարկմամբ հայտը ցուցահանդեսում ցուցանմուշի բաց ցուցադրումն սկսելու թվականից 6-ամսյա ժամկետում Գործակալություն ներկայացնելու պայմանի պահպանումը.

4) հայտարկվող նշանի համապատասխանությունը ցուցանմուշի վրայի նշանին՝ պայմանով, որ ապրանքները, որոնց համար խնդրարկվում է նշանի գրանցումը, ցուցադրվել են ցուցահանդեսում.

5) սույն կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջների պահպանումը ԱԾՄԴ յուրաքանչյուր դասի ապրանքների համար, այսինքն՝ առաջնությունը կարող է սահմանվել ներկայացված հայտում նշված յուրաքանչյուր դասի ապրանքների համար առանձին, պահպանելով սույն կետի 4-րդ ենթակետի պահանջները: Կարգի 124-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 122-123-րդ կետերի 1-3-րդ ենթակետերում նշված պայմաններից որևէ մեկը հայտատուի կողմից չկատարելու դեպքում, ապրանքային նշանի առաջնությունը սահմանվում է սույն կարգի 120-րդ կետին համապատասխան՝ հայտը Գործակալություն ներկայացնելու թվականով, այդ մասին ծանուցելով հայտատուին:

Հայցվոր կողմը հայտնել է, որ որոշման ուսումնասիրության արդյունքում գտնում է, որ տվյալ պարագայում ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդի կողմից իրականացված վարչարարության

ընթացքում չեն պարզվել մեկնաբանվող նորմերի կիրառման համար հիմք հանդիսացող վերը թվարկված պայմանների առկայությունը: Ավելին՝ խախտվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջն առ այն, որ՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը գնահատման առարկա չի դարձրել «ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ի կողմից ցուցահանդեսի կազմակերպիչների ինտերնետային կայքից վերցրած քաղվածքը, որով հավաստվում է «Կրեատիվ» ՓԲ ընկերության՝ ցուցահանդեսին չմասնակցելու հանգամանքը:

Հայցվորը հայտնել է, որ խախտվել են գործի փաստական հանգամանքների պարզման բազմակողմանիության և լրիվության պահանջները:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը հաշվի չի առել այն հանգամանքները, որ՝

- ցուցահանդեսի կազմակերպիչները երկու կազմակերպություններ են, հետևաբար «Կրեատիվ» ՓԲ ընկերության կողմից ներկայացված փաստաթուղթը պետք է վավերացված լիներ տվյալ ցուցահանդեսի կազմկոմիտեի կողմից, մինչդեռ այդպիսի փաստաթուղթ ներկայացված չի եղել.
- միայն ցուցահանդեսին որևէ իրավաբանական անձի մասնակցությունը բավարար չէ ցուցահանդեսային առաջնություն պնդելու համար, քանի որ էական նշանակություն ունի տվյալ ցուցահանդեսի ընթացքում ցուցանմուշի վրա տվյալ ապրանքային նշանի տեղադրումը, մինչդեռ այդ փաստը հաստատող որևէ ապացույց չի ներկայացվել:

Որոշումը չի համապատասխանում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ և 57-րդ հոդվածների դրույններին:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի ա/ ենթակետի՝ վարչական ակտն իր բովանդակությամբ պետք է համապատասխանի դրա ընդունման համար օրենքով սահմանված պահանջներին, նշում պարունակի այն բոլոր էական փաստական և իրավաբանական հանգամանքների վերաբերյալ, որոնք վարչական մարմնին հիմք են տվել ընդունելու համապատասխան որոշում: Նույն հոդվածի 4-րդ մասի «դ», «ե» և «զ» ենթակետերը սահմանում են, որ վարչական ակտը պետք է պարունակի ակտով լուծվող հարցի նկարագրությունը (նկարագրական մաս), ակտի ընդունման հիմնավորումը (պատճառաբանական մաս) և ընդունված որոշման շարադրանքը (եզրափակիչ մաս):

Վարչական ակտի հիմնավոր լինելու պահանջն ամրագրված է նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասում, համաձայն որի՝ գրավոր կամ գրավոր հաստատված վարչական ակտը պետք է պարունակի հիմնավորում, որում պետք է նշվեն համապատասխան որոշում ընդունելու բոլոր էական փաստական և իրավական հիմքերը: Տվյալ պարագայում վիճարկվող ակտում բացակայում են «ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապացույցներով հավաստվող էական փաստական հանգամանքների (խոսքը վերաբերում է «Կրեատիվ» ՓԲԸ ընկերության՝ ցուցահանդեսին չմասնակցելու փաստական հանգամանքին, ցուցանմուշի վրա ապրանքային նշանը տեղադրված լինելու և այլն) վերաբերյալ որևէ նշում:

Նշված փաստական հանգամանքի պարզման էական լինելը պայմանավորված է նրանով, որ ըստ էության հենց այդ փաստն է հիմք հանդիսացել «Ապրանքային և սպասարկման նշանների,

ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված նորմի կիրառման և վիճարկվող որոշման կայացման համար:

Որոշման պատճառաբանական մասում ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը նշել է՝ «... բողոքարկման խորհուրդը մանրամասն ուսումնասիրել է ներկայացված «Իտեկա Կավկասիա» ՍՊԸ-ի կողմից «Կրեատիվ» ընկերությանը տրված տեղեկանքը և Չորրորդ սննդարդյունաբերության վրացական միջազգային Ինտերֆուդ Ջորջիա 2007 ցուցահանդեսում մասնակցելու վերաբերյալ հավաստագիրը և պարզել, որ դրանք ստորագրված են հենց «Իտեկա Կավկասիա» ՍՊԸ-ի՝ ցուցահանդեսի կազմակերպչի տնօրեն Դ. Վ. Կոմունադզեի կողմից և որոնք կնքված են «Իտեկա Կավկասիա» ՍՊԸ-ի կնիքով»:

Պատասխանողն առանց համապատասխան փորձագիտական եզրակացության չէր կարող պարզել, որ «Կրեատիվ» ՓԲ ընկերության կողմից Պատասխանողին ներկայացված տեղեկանքը և Չորրորդ սննդարդյունաբերության վրացական միջազգային Ինտերֆուդ Ջորջիա 2007 ցուցահանդեսում մասնակցելու վերաբերյալ հավաստագիրը ստորագրված է հենց «Իտեկա Կավկասիա» ՍՊԸ-ի տնօրեն Դ. Վ. Կոմունադզեի կողմից և որոնք կնքված են «Իտեկա Կավկասիա» ՍՊԸ-ի կնիքով:

Տվյալ պարագայում ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդի կողմից խախտվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված նորմը, համաձայն որի՝ եթե փաստական հանգամանքների ուսումնասիրման համար անհրաժեշտություն է առաջանում նշանակել փորձագետ՝ ապա վարչական մարմինն այդ հարցով դիմում է համապատասխան կազմակերպության ղեկավարին կամ համապատասխան անձին՝ այդ մասին ծանուցելով վարույթի մասնակիցներին:

«Կրեատիվ» ՓԲ ընկերության կողմից ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդին ներկայացված տեղեկանքի և Չորրորդ սննդարդյունաբերության վրացական միջազգային Ինտերֆուդ Ջորջիա 2007 ցուցահանդեսում մասնակցելու վերաբերյալ հավաստագրի վրա դրված ստորագրության և կնիքի իսկության հարցերը կարող էին որոշվել միայն հատուկ գիտելիքների և մեթոդաբանության կիրառմամբ, որոնց պատասխանողը չի տիրապետել:

«Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված է. «Եթե արդյունաբերական սեփականության պահպանության մասին Փարիզյան կոնվենցիայի անդամ որևէ երկրում պահպանվող ապրանքային նշանի սեփականատիրոջ գործակալը կամ ներկայացուցիչը առանց նշանի սեփականատիրոջ թույլտվության իր անունից տվյալ նշանի գրանցման հայտ է ներկայացրել կամ այն գրանցել է Հայաստանի Հանրապետությունում» ապա նշանի սեփականատերն իրավունք ունի՝

ա) արգելելու նշանի գրանցումը.

բ) պահանջելու չեղյալ ճանաչել նշանի գրանցումը, եթե այն արդեն կատարվել է.

գ) արգելել նշանի օգտագործումը գործակալի կամ ներկայացուցչի կողմից՝ եթե ինքն այդպիսի օգտագործման թույլտվություն չի տվել:

«ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ի և «Կրեատիվ» ՓԲ ընկերության միջև 14.04.2007թ. կնքված ապրանքային նշանի օգտագործման իրավունքի փոխանցման պայմանագրի 2.1 կետով՝ «ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ն «Կրեատիվ» ՓԲԸ-ին է տրամադրել բացառիկ իրավունք խոչընդոտելու «ԺԼԹԾԿԺ» ապրանքային նշանի անօրինական օգտագործմանը, այդ թվում արգելել այդպիսի օգտագործումը

Ուկրանիայի տարածքում, ԱՊՀ երկրներում, մերձավոր և հեռավոր արտասահմանյան երկրներում:

Նշել է, որ իրենց պնդմամբ «ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ն հանդիսանում է նշված նորմից բխող իրավունքների կրող, այն պարզ պատճառով, որ «Կրեատիվ» ՓԲ ընկերությունը, որը պայմանագրի ուժով հանդիսացել է հայցվորի գործակալը (ներկայացուցիչը), առանց իրենց թույլտվության հայտ է ներկայացրել «ԺԼԹԿԺ» ապրանքային նշանն իր անվամբ գրանցելու համար:

«ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ն որոշման վերաբերյալ բողոք է ներկայացրել ՀՀ վարչապետին:

«Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի երկրորդ պարբերության համաձայն՝ բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատարանում այն ընդունելու օրվանից վեցամսյա ժամկետում:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ և 7-րդ մասերի ուժով, Հայցվորը նախընտրում է, որ սույն հայցը ներկայացնելու ժամկետ դիտարկվի «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի երկրորդ պարբերությամբ սահմանված ժամկետը:

Որոշումն ընդունվել է 04.11.2009 թվականին:

Հայցվորը դատարանին խնդրել է՝ ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի պահանջներով՝ անվավեր ճանաչել ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության զանգատարկման խորհրդի 2008 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 27/08 որոշումը:

«ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ն 13.11.2009թ. դատարանին է ներկայացրել դիմում՝ հայցի առարկան լրացնելու վերաբերյալ և հայտնել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածով սահմանված նորմի համաձայն՝ վիճարկման, պարտավորեցման, գործողության կատարման կամ ճանաչման հայցի հետ կարող է ներկայացվել պահանջ այն հետևանքները վերացնելու մասին, որոնք առաջացել են վիճարկվող վարչական ակտի կամ վիճարկվող գործողության (անգործության) կամ վարչական ակտ ընդունելը մերժելու կամ վարչական ակտ չընդունելու հետևանքով:

Հայտնել է, որ սույն գործով վիճարկվող 2008 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 27/08 որոշման (վարչական ակտ) հետևանքով «ԺԼԹԿԺ» ապրանքային նշանի նկատմամբ թիվ 20080303 հայտի հիման վրա գրանցվել է «Կրեատիվ» ՓԲԸ-ի բացառիկ իրավունքը, ինչը հաստատվում է պատասխանողի ինտերնետային պաշտոնական կայք էջում հրապարակված տվյալով (գրանցումը կատարվել է 16.12.2008թ.):

Հայցվորը հայտնել է, որ նման պարագայում գտնում է, որ «ԺԼԹԿԺ» ապրանքային նշանի նկատմամբ թիվ 20080303 հայտի հիման վրա «Կրեատիվ» ՓԲԸ-ի բացառիկ իրավունքի գրանցումը ուղղակի պատճառահետևանքային կապի մեջ է գտնվում 04.11.2008թ. թիվ 27/08 որոշման հետ: Այլ կերպ ասած՝ եթե 04.11.2008թ. թիվ 27/08 որոշմամբ «ԺԼԹԿԺ» ապրանքային նշանի թիվ 13021 գրանցումը անվավեր չճանաչվեր, ապա «ԺԼԹԿԺ» ապրանքային նշանի նկատմամբ թիվ 20080303 հայտի հիման վրա «Կրեատիվ» ՓԲԸ-ի բացառիկ իրավունքը չէր գրանցվի:

Հայցվորը դատարանին խնդրել է՝ ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 15-րդ, 19-րդ, 70-րդ հոդվածների դրույթներով՝ որպես վիճարկման հայցի հետևանք՝ վերացնել (անվավեր ճանաչել) ՀՀ մտավոր սեփականության գործակալության կողմից՝ «Կրեատիվ» ՓԲԸ-ի թիվ 20080303 հայտի հիման վրա «ԺԼԹԿԺ» ապրանքային նշանի նկատմամբ 16.12.2008թ. կատարված գրանցումը (գրանցման համարը՝ 13526):

Գործի քննությանը ներկայացած հայցվորի ներկայացուցիչները հայցը պնդել են ամբողջությամբ և դատարանին խնդրել բավարարել այն:

2. Պատասխանողի փաստարկները և իրավական դիրքորոշումը Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալությունը 04.06.2009թ. դատարանին է ներկայացրել հայցադիմումի պատասխան և հայտնել, որ 10.07.2008թ «ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ի անվամբ գրանցվել է «ԺԼԹԿԺ» բառային ապրանքային նշանը՝ վկայագիր թիվ 13021, 12.11.2007թ առաջնությամբ:

16.08.2008թ «Կրեատիվ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ է. Նահապետյանը խորհուրդ է ներկայացրել բողոք «ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ի անվամբ գրանցված գրանցման թիվ 13021 «ԺԼԹԿԺ» բառային ապրանքային նշանի գրանցումն անվավեր ճանաչելու խնդրանքով:

Խորհուրդը հետևյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա. Ազիզյան, անդամներ՝ Ա. Խաչիկյան, Բ. Վարդանյան, Գ. Ադամյան, Ա. Տոնիկյան և Ա. Բաբայան, իր 2008թ. նոյեմբերի 4-ի նիստում քննարկել է «Կրեատիվ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ է. Նահապետյանի 16.08.2008թ ներկայացված բողոքը՝ «ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ի անվամբ գրանցված գրանցման թիվ 13021 «ԺԼԹԿԺ» բառային ապրանքային նշանի գրանցումն անվավեր ճանաչելու խնդրանքով և 04.11.2008թ կայացրել է որոշում նշված բողոքը բավարարելու և «ԺԼԹԿԺ» գրանցման թիվ 13021 բառային ապրանքային նշանի գրանցումն ամբողջովին անվավեր ճանաչելու մասին:

Նշել է, որ պատասխանով ներկայացվում է առարկություններ հայցադիմումի պահանջի և այդ պահանջի ստորև ներկայացված հիմքերի և փաստերի դեմ իր հիմնավորումներով: Գործակալությունը չի ընդունում հայցադիմումով ներկայացված պահանջը ամբողջությամբ: Պատասխանում առարկությունները ներկայացված են ինչպես ամբողջ հայցադիմումի, այնպես էլ հայցադիմումի առանձին կետերի և/կամ բաժինների վերաբերյալ:

Հայտնել է, որ հայցադիմումի «Գործի նախապատմությունը և փաստերը» վերնագրված 1-ին բաժնի 1 ենթակետի վերաբերյալ առարկում են հետևյալ հիմնավորմամբ:

Հայցվորը որպես գործի նախապատմություն և/կամ փաստ նշում է, որ մինչև Հայաստանի Հանրապետությունում «ԺԼԹԿԺ» բառային ապրանքային նշանի գրանցումը այն օգտագործել է և գրանցել է ԱՊՀ այլ երկրներում՝ Բելառուսիա, ՌԻկրաինա, Ղազախստան: Նշել է, որ բացի ՌԻկրաինայում «ԺԼԹԿԺ» բառը պարունակող համակցված ապրանքային նշանի գրանցումն ապացուցող փաստաթղթից, որևիցե այլ երկրում «ԺԼԹԿԺ» բառային ապրանքային նշանի գրանցումն ապացուցող որևէ այլ փաստաթուղթ չի ներկայացվել ոչ խորհուրդ, ոչ էլ դատարան: Ղատարանի ուշադրությունը հրավիրել է այն հանգամանքին, որ ՌԻկրաինայում գրանցվել է «ԺԼԹԿԺ» բառը պարունակող համակցված ապրանքային նշան, այլ ոչ թե «ԺԼԹԿԺ» բառային ապրանքային նշան, նշվածը ապացուցվում է ՌԻկրաինայում ապրանքային նշանի գրանցման վկայագրով, որը ներկայացվել է խորհրդին:

Անդրադառնալով ապրանքային նշանի օգտագործման վերաբերյալ հայցվորի փաստարկին, պատասխանողը նշել է, որ հայցվորը ընդհանրապես որևէ ապացույց չի ներկայացրել, ընդհակառակը «ԺԼԹԿԺ» ապրանքային նշանի օգտագործման ապացույցներ է ներկայացրել «Կրեատիվ» ՓԲԸ-ն 2005-2008թթ. վերաբերյալ:

Հետևաբար հայցվորի այն փաստարկները, որ մինչև Հայաստանի Հանրապետությունում «ԺԼԹԿԺ» բառային ապրանքային նշանի գրանցումը հայցվորն այն օգտագործել և գրանցել է ԱՊՀ այլ երկրներում՝ Բելառուսիա, ՌԻկրաինա, Ղազախստան, (բացառությամբ ՌԻկրաինայում «ԺԼԹԿԺ» բառը պարունակող համակցված ապրանքային նշանի գրանցման փաստի) կրում են միայն հայտարարության բնույթ և փաստ համարվել չեն կարող:

Ավելին հայցվորը չի հիմնավորել, թե ինչ առնչություն ունի որևէ

երկրում հայցվորի կողմից «ԺԼԹԾԿԺ» բառային ապրանքային նշանի գրանցումը կամ օգտագործումը Հայաստանի Հանրապետությունում «ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ի անվամբ գրանցված «ԺԼԹԾԿԺ» բառային ապրանքային նշանի գրանցումն անվավեր ճանաչելու հետ, ուստի սույն փաստարկները քննվող հարցի հետ որևէ կապ ունենալ չեն կարող և չեն կարող գործի նախապատմություն կամ փաստ հանդիսանալ: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածը սահմանում է, որ «գրավոր ապացույցներ են գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի մասին տեղեկություններ պարունակող իրավական ակտերը, տեղեկանքները, գործարար և մասնավոր թղթակցությունը և այլ գրավոր նյութերը (փաստաթղթերը)», տվյալ դեպքում այլ երկրներում, մասնավորապես, Ռեկրահայում «ԺԼԹԾԿԺ» բառը պարունակող համակցված ապրանքային նշանի գրանցումը հավաստող վկայագիրը «ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ի անվամբ գրանցված «ԺԼԹԾԿԺ» բառային ապրանքային նշանի գրանցումն անվավեր ճանաչելու, առավել ևս խորհրդի վիճարկվող որոշումն անվավեր ճանաչելու տվյալ գործի լուծման համար որևէ նշանակություն ունենալ չի կարող, համենայն դեպս հայցվորը չի հիմնավորել գործի լուծման համար սույն փաստարկների նշանակություն ունենալու հանգամանքը, ուստի սույն փաստարկները և Ռեկրահայում «ԺԼԹԾԿԺ» բառը պարունակող համակցված ապրանքային նշանի գրանցումը հավաստող վկայագիրը սույն գործով ապացույցներ համարվել չեն կարող: Պատասխանողը դատարանին միջնորդել է դրանք հանել ապացույցների շարքից: Հայտնել է, որ հայցադիմումի «Գործի նախապատմությունը և փաստերը» վերնագրված 1-ին բաժնի 6-րդ և 9-րդ ենթակետերի վերաբերյալ առարկում են հետևյալ հիմնավորմամբ: Հայցվորը նշում է, որ ի առարկություն պատասխանողին ներկայացրել է Վրաստանում տեղի ունեցած ցուցահանդեսի վերաբերյալ պաշտոնական ինտերնետային կայքից քաղվածք: Նշել է, որ հայցվորը որևէ ապացույց չի ներկայացրել առ այն, որ այդ քաղվածքը ցուցահանդեսի կազմակերպիչների պաշտոնական ինտերնետային կայքից է, ներկայացված քաղվածքից բացարձակապես չի բխում, որ այն պաշտոնական կայքից է, ավելին և վարչական վարույթի ընթացքում և սույն դատական գործընթացի ժամանակ բազմիցս փորձել են նշված կայքը գտնել, սակայն ինտերնետում նման կայք բացակայում է, այն պարզապես գոյություն չունի, խոսքը վերաբերում է «Interfoodgeorgia.ge/ru» կայքին: Ավելին ներկայացված երկու քաղվածքներում առկա է որոշակի անհամապատասխանություն, այսպես, մեկ քաղվածքում որպես մասնակից նշված է «TRADING COMPANY HA LTD (Թրեյդինգ Քամփնի ՀԱ ԼԹԴ)» ընկերությունը, իսկ մյուս՝ «Մասնակիցների ցուցակ», վերնագրված քաղվածքում «TRADING COMPANY HA LTD (Թրեյդինգ Քամփնի ՀԱ ԼԹԴ)» ընկերությունը նշված չէ: Բացի այդ, դատարան ներկայացված «Ինտերֆուդ Վրաստան-2007 չորրորդ վրացական միջազգային ցուցահանդես պաշտոնական կատալոգ» վերնագրված կատալոգի «ցուցասրահի հատակագիծը» բաժնում նշված են ընկերություններ, որոնք խորհրդին ներկայացված, այսպես ասած, պաշտոնական կայքից կատարված քաղվածքում բացակայում են, օրինակ՝ կատալոգում որպես մասնակից նշված են նաև «ԱՅ ԹԻ Ի Վարչության գրասենյակ» (ITE Management office) ընկերությունը, «Վիտամաքս-Ի» (VITAMAX-E) ընկերությունը, «TRADING COMPANY HA LTD» (Թրեյդինգ Քամփնի ՀԱ ԼԹԴ) ընկերությունը, որոնք քաղվածքում նշված չեն, և ընդհակառակը, օրինակ՝ քաղվածքում նշված են «GEORGIA TODAY» (Ջորջիա Թոդեյ) ընկերությունը, «JSC SPE Firm «VOSHOD» (ՋՍԿ ՍՊԵ Ֆրոմ Վոշոդ) ընկերությունը, «PROMO-CENTR ExpoUA» (Պրոմո-սենտր ԷքսպոՈՒԱ) ընկերությունը, «Sarke Information agency» (Սարկե Ինֆորմեյշն Էյջընսի) ընկերությունը, «The Financial» (Դը Ֆայնանսըլ) ընկերությունը, որոնք պաշտոնական կատալոգում նշված չեն: Հետևաբար, ելնելով վերոգրյալից չի կարելի պնդել, որ

ներկայացված քաղվածքները կամ կատալոգը ամբողջական են կամ ճշգրիտ, ուստի նշված քաղվածքները չեն կարող հանդիսանալ այն փաստերը, համաձայն որի որևէ ընկերություն՝ մասնավորապես «Կրեատիվ» ՓԲԸ-ն, հանդիսացել է մասնակից կամ ընդհակառակը: Նշել է, որ վերը նշված կատալոգը խորհրդին չի ներկայացվել: Իսկ հայցադիմումի «Գործի նախապատմությունը և փաստերը» վերնագրված 1-ին բաժնի 9-րդ ենթակետում հայցվորը նշում է, որ «ցուցահանդեսի մասնակցության փաստն ամրագրվել է ինչպես ինտերնետային կայքում, այնպես էլ՝ կատալոգում», ընդհանրապես չանդրադառնալով կամ միտումնավոր անտեսելով մասնակցին տրված ցուցահանդեսին մասնակցելու վերաբերյալ վկայագրերը, որը և հանդիսանում է հենց այն փաստը, որ վկայում է այն մասին, որ վկայագրում նշված ընկերությունը մասնակցել է նշված ցուցահանդեսին: Առավել ևս, որ հայցվորը դատարան է ներկայացնում «Դուստր Մարիաննա» ընկերությանը տրված նույն ցուցահանդեսին մասնակցելու վերաբերյալ վկայագիր: Ավելին, հաշվի առնելով սույն պատասխանի նախորդ պարբերությունում նշված հակասությունները քաղվածքների և կատալոգի միջև և այն, որ այդ աղբյուրները հավաստի կամ ամբողջական չեն, միակ պաշտոնական հիմնավոր փաստաթուղթը հանդիսանում է հենց վկայագիրը, որը տրվել է վկայագրում նշված մասնակից ընկերությանը առ այն, որ նա մասնակցել է նշված ցուցահանդեսին: Հայտնել է, որ հայցադիմումի «Գործի նախապատմությունը և փաստերը» վերնագրված 1-ին բաժնի 8-րդ ենթակետում հայցվորը նշել է, որ «Որոշման կայացման հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ իբրև առկա է «Կրեատիվ» ՓԲԸ կողմից հայտարարված «ՃԼԹԾԿԺ» ապրանքային նշանի ցուցահանդեսային առաջնություն 04.10.2007թ. դրությամբ, ...», այս կապակցությամբ հայտնել է, որ որոշման հիմքերից նշվածը որոշման մեջ շարադրելուց «իբրև» բառը կիրառված չէ և իրականությանը չի համապատասխանում: Հայցվորը պարզապես փաստը աղավաղել է և այն գործի փաստ կամ նախապատմություն համարվելու իրավական և բարոյական հիմք չունի: Անդրադառնալով հայցադիմումի «Գործի նախապատմությունը և փաստերը» վերնագրված 1-ին բաժնի 11-րդ ենթակետում նշված Վալենտինա Սեմիլետի գրությանը, հայտնել է, որ այն վարչական վարույթի ընթացքում չի ներկայացվել խորհրդին: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 75-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «վարչական մարմինը վարչական բողոքը քննարկելիս առաջնորդվում է ինչպես գործում առկա, այնպես էլ լրացուցիչ ներկայացվող ապացույցներով»: Հետևաբար հաշվի առնելով այն փաստը, որ նշված գրությունը գործում առկա չի եղել և խորհրդին չի ներկայացվել խորհուրդը չէր կարող անտեսել կամ դեկավարվել ներկայացված փաստաթղթով, որը կհանգեցնե՞ր նույն կամ մեկ այլ որոշման կայացմանը: Բացի այդ սույն գրությունը չի հիմնավորում խորհրդի ընդունած որոշման օրենքին հակասելու հայցվորի պնդումները, քանի որ սույն դատական գործով հայցվորը վիճարկում է ոչ թե «Կրեատիվ» ՓԲԸ-ի նշված ցուցահանդեսին մասնակցելու փաստը հիմնավորող վկայագիրը, այլ խորհրդի որոշումը, որի հիմքում դրվել է նաև նշված վկայագիրը, որը մինչ այժմ հանդիսանում է օրինական փաստաթուղթ և Վալենտինա Սեմիլետի գրությունը, որը ըստ էության հանդիսանում է «Իտեկա Կավկասիա» ընկերության աշխատակցուհու հայտարարություն, չի կարող հիմք հանդիսանալ անտեսելու օրինական փաստաթուղթը, որը հիմնավորում է հակառակը: Հետևաբար դա սույն գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստ համարվել չի կարող: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածը սահմանում է, որ «գրավոր ապացույցներ են գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի մասին տեղեկություններ պարունակող ..... գրավոր նյութերը»: Պատասխանողը միջնորդել է՝ հաշվի առնելով վերը նշվածը, Վալենտինա Սեմիլետի գրությունը հանել ապացույցների շարքից:

Հայտնել է, որ հայցադիմումի «Պահանջի իրավական հիմքերը և հիմնավորումները» վերնագրված 2-րդ բաժնի 1-ին պարբերությանն առարկում են հետևյալ հիմնավորմամբ:

Հայցվորը նշել է, որ «Որոշմամբ խախտվել են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների և իրավական ակտերի հայցադիմումում վկայակոչված նորմերով ամրագրված հայցվորի իրավունքներն ու ազատությունները, մասնավորապես խոչընդոտվում է հայցվորի՝ վիճարկվող բառային ապրանքային նշանի օգտագործմամբ ազատ տնտեսական գործունեությամբ զբաղվելու իրավունքի իրացումը...»: Սակայն հայցադիմումի պարզ ուսումնասիրությունից իսկ ակնհայտ է դառնում, որ ՀՀ Սահմանադրության որևէ հոդվածին հղում իսկ կատարված չէ, որը սահմանում է «ապրանքային նշանի օգտագործմամբ ազատ տնտեսական գործունեությամբ զբաղվելու իրավունք», հետևաբար հայցվորի ընդհանուր և վերացական հղումը ՀՀ Սահմանադրությանը բացարձակապես անհիմն է, ուստի և վիճարկվող որոշմամբ նման խախտման հայցվորի պնդումը ևս հիմնազուրկ է: Ինչ վերաբերում է հայցադիմումում վկայակոչված իրավական այլ նորմերով «ապրանքային նշանի օգտագործմամբ ազատ տնտեսական գործունեությամբ զբաղվելու իրավունքի» խախտման հայցվորի պնդմանը, ապա հայցվորի կողմից նշված և ոչ մի իրավական նորմ նման իրավունք չի սահմանում, որպիսին վիճարկվող որոշմամբ խախտվեր: Ընդհանրապես ապրանքային նշանների միջոցով հնարավոր չէ սահմանափակել որևէ տնտեսական գործունեություն, քանի որ նշանները նախատեսված են տնտեսական գործունեության արդյունքները (ապրանքների նկատմամբ կիրառելու մասով) կամ տնտեսական գործունեության իրականացման մեխանիզմները (ծառայությունների մատուցման համար՝ սպասարկման նշաններ): Հետևաբար ՀՀ Սահմանադրությանը կամ այլ օրենքներին ու իրավական ակտերին հղում կատարելը բացարձակապես անհիմն է: Հայտնել է, որ հայցադիմումի «Պահանջի իրավական հիմքերը և հիմնավորումները» վերնագրված 2-րդ բաժնի 1-ին կետի վերաբերյալ առարկում են հետևյալ հիմնավորմամբ:

Հայցվորը հայցադիմումում նշել է, որ խորհուրդը չի պարզել «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասում, «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգի» 19-րդ կետի 6-րդ ենթակետում, կարգի 123-րդ կետում, 124-րդ կետում թվարկված պայմանները, և խախտել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման պահանջը:

Նշել է, որ խորհուրդը օրենքում նշված բոլոր պայմանները ստուգել է, մասնավորապես որոշման մեջ նշվել է, որ «Կրեատիվ» ՓԲԸ-ն 03.04.2008թ ներկայացրել է «ԺԼԹԿԺ» բառային ապրանքային նշանի գրանցման հայտ, որտեղ նշվել է ցուցահանդեսային առաջնությունը՝ 04.10.2007թ., այսինքն՝ վեց ամսվա ժամկետը պահպանված է, որ հայտին կից միաժամանակ ներկայացվել է առաջնությունը հավաստող 07.02.2008թ. թիվ 08/92 «Ի տեկա Կավկասիա» ընկերության կողմից տրված տեղեկանքը, որը որոշման մեջ նշված է: Նշված տեղեկանքը պարունակում է ապրանքը ցուցադրող ընկերության անվանումը, նշանը, «ԺԼԹԿԺ» ապրանքային նշանով նշված ապրանքների ցանկը, ցուցահանդեսում ցուցանմուշի ցուցադրման թվականը, վայրը: Վրաստանը հանդիսանում է Փարիզյան կոնվենցիայի անդամ պետություն, որը գործակալության համար հայտնի հանգամանք է հանդիսանում և որին կարելի է ծանոթանալ Մտավոր Սեփականության Համաշխարհային Կազմակերպության պաշտոնական հրապարակումներից: Հետևաբար «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասում թվարկված

պայմանները առկա են, որով և ղեկավարվելով խորհուրդը հաստատել է ցուցահանդեսային առաջնության առկայությունը: Անդրադառնալով կարգի 124-րդ հոդվածի նորմի կիրառմանը, գտնում է, որ այն տվյալ դեպքում կիրառելի չէ, քանի որ հայտատուն կարգի 123-րդ կետով սահմանված բոլոր պայմանները պահպանել է: Հայցվորը հայցադիմումով պնդել է, որ ցուցահանդեսի ընթացքում ցուցանմուշի վրա տվյալ ապրանքային նշանի տեղադրումը հաստատող որևէ ապացույց չի ներկայացվել: Այս կապակցությամբ հայտնել է, որ «Կրեատիվ» ընկերությունը հայտին կից ներկայացրել է տեղեկանք, որում նշված է, որ ընկերությունը ցուցահանդեսում ներկայացրել է տեղեկանքում նշված ապրանքները «ժԼԹԾԿԺ» ապրանքային նշանով մակնշված: Հետևաբար հայցվորի սույն պնդումը անհիմն է:

Հայցվորը նշել է, որ խախտվել են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ և 57-րդ հոդվածները, քանի որ որոշման մեջ առկա չէ էական փաստական հանգամանքների վերաբերյալ որևէ նշում, մասնավորապես, «Կրեատիվ» ընկերության ցուցահանդեսին չմասնակցելու և ցուցանմուշի վրա ապրանքային նշանը տեղադրված լինելու վերաբերյալ: Դատարանին հայտնել է, որ խորհրդին ներկայացվել են ցուցահանդեսին «Կրեատիվ» ՓԲԸ-ի մասնակցությունը և «ժԼԹԾԿԺ» ապրանքային նշանով մակնշված ապրանքների ցուցադրումը հիմնավորող ապացույցները, այն է՝ տեղեկանքը և վկայագիրը, որոնց վերաբերյալ նշումները առկա են որոշման մեջ: Եվ ընդհանրապես, եթե ընկերությունը մասնակցել է ցուցահանդեսին, ապա ինչպես պետք է որոշման մեջ նշվեր ընկերության ցուցահանդեսին չմասնակցելու փաստի մասին:

Հայցվորի այս պնդումը բացարձակապես անհիմն է և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ և 57-րդ հոդվածների խախտում տեղի չի ունեցել: Անդրադառնալով հայցվորի այն պնդմանը, որ խորհուրդը տեղեկանքի և վկայագրի «Իտեկա Կավկասիա» ընկերության տնօրեն Կոմունաձեի կողմից ստորագրված լինելու և «Իտեկա Կավկասիա» ընկերության կողմից կնքված լինելու հանգամանքը առանց փարձագետի եզրակացության չէր կարող պարզել և խորհուրդը խախտել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, հայտնել է, որ եթե փաստաթղթում նշված է անձի պաշտոնը, տվյալ դեպքում՝ տնօրեն, ազգանունը, տվյալ դեպքում՝ Կոմունաձե, և դրված է կնիք, որը ընթերցելի է, տվյալ դեպքում կնիքում գրված է «Iteca kavkasia Ltd», ապա մասնագիտական գիտելիք անհրաժեշտ չէ այն փաստելու համար, առավել ևս, որ խորհրդում չի վիճարկվել ստորագրությունը կամ կնիքը Կոմունաձեի կողմից դրվելու կամ «Իտեկա Կավկասիա» ընկերության կնիքը հանդիսանալու փաստերը: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «եթե փաստական հանգամանքների ուսումնասիրման համար անհրաժեշտություն է առաջանում, նշանակել փորձագետ, ...», այսինքն խոսքը գնում է փորձագետ նշանակելու անհրաժեշտության մասին, առանց որի հնարավոր չէ ուսումնասիրել որևէ հանգամանք, տվյալ դեպքում նման անհրաժեշտություն խորհրդի մոտ չի առաջացել, իսկ հայցվորի կողմից այդ հանգամանքը խորհրդում չի վիճարկվել, ուստի «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի խախտում տեղի չի ունեցել: Հայցվորը նշել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի խախտման մասին, սակայն հայցվորը չի նշել և չի հիմնավորել, թե նշված հոդվածը խորհուրդը ինչ կերպ է խախտել, այն նույնպես հիմնադուրկ հայտարարություն է հանդիսանում:

Պատասխանողը հայտնել է, որ հայցադիմումի «Պահանջի իրավական հիմքերը և հիմնավորումները» վերնագրված 2-րդ բաժնի

2-րդ կետի վերաբերյալ առարկում են հետևյալ հիմնավորմամբ: Հայցվորը հղում կատարելով «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածին և 14.04.2007թ «Կրեատիվ» ՓԲԸ-ի և «ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ի միջև կնքված լիցենզային պայմանագրի մասին նշում է, որ «Կրեատիվ» ՓԲԸ-ն հանդիսանում է հայցվորի գործակալը (ներկայացուցիչը) և առանց հայցվորի թույլտվության հայտ է ներկայացրել: Սույն փաստարկի հետ կապված պատասխանողը հայտնել է, որ ապրանքային նշանի սեփականատիրոջ, նրա ներկայացուցչի կամ գործակալի կողմից գործակալություն հայտ ներկայացնելը տվյալ դեպքում որևէ իրավական նորմով խորհրդի որոշումը անվավեր ճանաչելու հիմք չի հանդիսանում, հայցվորն ինքը որևէ իրավական հիմք չի ներկայացրել սույն հիմքով իր պահանջը հիմնավորելու համար: Ընդհանրապես սույն գործով վիճարկվում է խորհրդի որոշումը՝ «ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ի անվամբ գրանցված ապրանքային նշանի գրանցումն անվավեր ճանաչելու վերաբերյալ, որը որևէ առընչություն չունի «ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ի գործակալի, թեկուզև «Կրեատիվ» ՓԲԸ-ի կողմից սույն ապրանքային նշանի հայտ ներկայացնելու հետ, ուստի այն քննարկվող հարցի հետ որևէ կապ չունի և չի կարող որոշումն անվավեր ճանաչելու հիմք հանդիսանալ ոչ որևէ փաստական և ոչ էլ որևէ իրավական հիմքով: Բացի այդ հայցվորի հայտարարությունն այն մասին, որ «Կրեատիվ» ՓԲԸ-ն հանդիսանում է «ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ի գործակալ կամ ներկայացուցիչ վիճելի է, և գտնում է, որ սույն փաստարկը գործի հետ որևէ առընչություն չունի:

Պատասխանողը դատարանին հայտնել է, որ սույն պատասխանում նշված բոլոր հիմքերով գտնում են, որ հայցադիմումն անհիմն է և պետք է մերժվի ամբողջությամբ:

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալությունը 28.07.2009 թվականին դատարանին է ներկայացրել հայցադիմումի պատասխան և հայտնել, որ առարկում են «Ինտերոյ» ՍՊԸ-ի ներկայացուցչի 09.07.2009թ դատարան ներկայացրած՝ հայցի հիմքերը լրացնելու վերաբերյալ, դիմումի դեմ, հետևյալ հիմնավորումներով:

Հայցվորը ըստ էության նշել է, որ նախ՝ Է. Նահապետյանի լիազորագիրը ներկայացվել է պատճենի տեսքով, ուստի չի կարող համարվել պատշաճ, երկրորդ՝ լիազորագրի բովանդակության համաձայն Է. Նահապետյանը իրավասու չէր «Կրեատիվ» ՓԲԸ-ի 26.03.2008թ լիազորագրի հիման վրա ներկայացնել ապրանքային նշանի հետ կապված ընկերության շահերը, և երրորդ՝ Է. Նահապետյանը վարչական ակտեր բողոքարկելու լիազորությամբ օժտված չի եղել:

1. Է. Նահապետյանը բողոքարկման խորհուրդ ներկայացրել է լիազորագրի պատճենը, սակայն լիազորագրի բնօրինակը ներկայացված է եղել գործակալություն դեռևս «ԺԼԹԾԿԺ» բառային ապրանքային նշանի գրանցման թիվ 13526 հայտի ներկայացման շրջանակներում՝ ի պատասխան հարցմանը ներկայացվել է 13.05.2008-ին, և լիազորագրի պատճենի վրա նշում է արվել, որ բնօրինակը գտնվում է թիվ 20080303 հայտում: Բողոքարկման խորհուրդը ստուգել է այդ հանգամանքը և պարզել, որ իրոք բնօրինակը գտնվում է ապրանքային նշանի գրանցման թիվ 20080303 հայտի նյութերում: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ առավելագույնի սկզբունքի համաձայն խորհուրդը չի պահանջել ներկայացնելու բնօրինակը, քանի որ այն արդեն իսկ ներկայացված է եղել գործակալություն և գտնվում է գործակալությունում՝ համապատասխան գործում, մինչ այժմ: Այսինքն ըստ էության ներկայացվել է բնօրինակը, պարզապես վիճարկվող որոշման մեջ ֆիքսվել է լիազորագիրը պատճենի տեսքով ներկայացվելու հանգամանքը:

2. Ըստ էության «արդյունաբերական սեփականություն»

հասկացության հիմնական իրավական աղբյուրը «Արդյունաբերական սեփականության պահպանության մասին Փարիզյան կոնվենցիայի» (կնքված 1883թ մարտի 20-ին, Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993թ ապրիլի 22-ից) 1-ին հոդվածի 2-րդ մասն է, համաձայն որի՝ «արդյունաբերական սեփականության օբյեկտներ են հանդիսանում գյուտի արտոնագրերը, օգտակար մոդելները, արդյունաբերական նմուշները, ապրանքային նշանները, սպասարկման նշանները, ֆիրմային անվանումները և ապրանքների ծագման տեղանունները, ինչպես նաև անբարեխիղճ մրցակցության կանխումը», ակնհայտ է, որ ապրանքային նշանները հանդիսանում են արդյունաբերական սեփականության օբյեկտ, ուստի է. Նահապետյանը լիազորագրի համաձայն իրավասու է եղել ներկայացնելու «Կրեատիվ» ՓԲԸ-ի շահերը ապրանքային նշանի նկատմամբ իրավունքների ձեռք բերման, պահպանության, գործողության մեջ պահելու հետ կապված բոլոր հարցերով:

3. Ինչ վերաբերում է է. Նահապետյանի կողմից վարչական ակտեր բողոքարկելու լիազորությամբ օժտված չլինելու հարցին, ապա լիազորագրի համաձայն՝ է. Նահապետյանը ներկայացնում է «Կրեատիվ» ՓԲԸ-ի շահերը ապրանքային նշանի նկատմամբ իրավունք ձեռք բերման, պահպանության, գործողության մեջ պահելու հետ կապված բոլոր հարցերով, այսինքն՝ այն բոլոր հարցերով որոնք կարող են ծագել իրավունքի ձեռք բերման, պահպանության, գործողության մեջ պահելու հետ կապված, ուստի, գտնում է, որ բողոք ներկայացնելը ընդգրկվում է թվարկված հանգամանքների հետ կապված «բոլոր հարցերով» արտահայտության մեջ: «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն ապրանքային նշանը չի կարող գրանցվել նույն կամ նույնատիպ ապրանքների համար Հայաստանի Հանրապետությունում այլ անձի անունով արդեն գրանցված կամ գրանցման ներկայացված ավելի վաղ առաջնությամբ ապրանքային նշանին, այսինքն՝ վիճարկվող գրանցումը կարող էր ապրանքային նշանի նկատմամբ իրավունքների ձեռք բերման արգելք հանդիսանալ, ինչպես նաև «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն «Կրեատիվ» ՓԲԸ-ն ցուցահանդեսային առաջնության իրավունք է ունեցել, որը փորձաքննության ընթացքում անտեսվել է: Հետևաբար, է. Նահապետյանի կողմից բողոք ներկայացնելը հետապնդել է «Կրեատիվ» ՓԲԸ-ի կողմից ապրանքային նշանի նկատմամբ իրավունքի ձեռքբերման և ապրանքային նշանի նկատմամբ ցուցահանդեսային առաջնության իրավունքի պահպանման նպատակ, այսինքն՝ լիազորագրի բովանդակության համաձայն նման գործողություններ կատարելու իրավասություն է դուրսդրվել Նահապետյանը ունեցել է:

Հետևաբար հայցվորի ներկայացված հայցի հիմքերը լրացնելու վերաբերյալ դիմումում նշված փաստարկները անհիմն են: Հայտնել է, որ սույն պատասխանում և նախկինում ներկայացված պատասխանում նշված բոլոր հիմքերով գտնում են, որ հայցադիմումը անհիմն է և պետք է մերժվի ամբողջովին: Գործի քննությանը ներկայացած պատասխանող կողմը պնդել է ներկայացված առարկությունները և դատարանին խնդրել հայցն ամբողջությամբ մերժել:

3. Երրորդ անձի փաստարկները և իրավական դիրքորոշումը «Կրեատիվ» ՓԲԸ-ն (ներկայացուցիչ Լ. Յորդանյան) 28.10.2009թ. դատարանին է ներկայացրել հայցադիմումի պատասխան և հայտնել, որ հայցվորի ներկայացուցչի պահանջն առարկայազուրկ է, անհիմն և այն չի բխում ՀՀ օրենսդրությամբ ամրագրված իրավական նորմերից, հետևյալ պատճառաբանությամբ. Հայցադիմումի «Գործի նախապատմությունը և փաստերը» բաժնում

ներկայացված փաստերի վերաբերյալ երրորդ անձը հայտնել է՝ ինչպես հայցվորը նշում է իր 09.07.2009թ. ներկայացված վիճարկման հայցադիմումի պատասխանի վերաբերյալ առարկություններում, հայցադիմումի նշված բաժինը ուղղված է «հնարավորինս հակիրճ և բովանդակալից դատարանին ներկայացնել գործի վերաբերյալ մինչդատական իրողությունները, ինչպես նաև այն փաստերը, որոնք, ըստ հայցվորի, գործի համար ունեն էական նշանակություն»: Նշված բաժնում «մինչդատական իրողությունը» ներկայացված է խիստ սուբյեկտիվ՝ իրականությունը ոչ լիարժեք և փաստերը՝ հայցվորին շահավետ տեսանկյունից ներկայացնելու միտումով: Այդ իսկ պատճառով, չնայած նրա, որ հայցվորը առարկություններով հանձն է առել իր դիրքորոշումը «ավելի ամբողջական ներկայացնել դատական նիստերում՝ իր դատավարական իրավունքների իրացման ընթացքում», չեն կարող չանդրադառնալ նշված բաժնում նշված փաստերի բովանդակությանը:

1. Հայցադիմումի «Գործի նախապատմությունը և փաստերը» բաժնի 1-ին կետում հայցվորը նշում է, որ վերջինս մինչև Հայաստանում «ԺԼԹԿԺ» ապրանքային նշանի գրանցումը նշված ապրանքային նշանը օգտագործել և գրանցել է ԱՊՀ այլ երկրներում (Ուկրաինա, Բելառուս, Ղազախստան): Առաջին հայացքից սույն գործի համար որևէ էական նշանակություն չունեցող այս հայտարարությունը միտված է քողարկել մի շարք էական փաստեր, որոնք սույն գործի համար ունեն էական նշանակություն: Այսպես, հայցվորը միտումնավոր նշում է «ապրանքային նշանը օգտագործել է» արտահայտությունը՝ ցանկանալով տպավորություն ստեղծել որ վերջինս հանդիսանում է «ԺԼԹԿԺ» ապրանքային նշանով մակնշվող ապրանքների արտադրողը: Իրականում, սկսած 2002 թվականից «ԺԼԹԿԺ» ապրանքային նշանով մակնշված բուսական յուղ, մարգարին և ճարպ արտադրվում է «Կրեատիվ» ՓԲԸ կողմից: «ԺԼԹԿԺ» ապրանքային նշանով մակնշված ապրանքները մեր վստահորդը արտադրում է Ուկրաինայում և արտահանում ԱՊՀ երկրներ, ներառյալ՝ Հայաստան, Վրաստան, Ուզբեկստան, Դրոզստան և այլ երկրներ: Ի դեպ Ուկրաինայում, չնայած այն փաստի, որ «ԺԼԹԿԺ» ապրանքային նշանը գրանցված է մեկ այլ ընկերության անունով (Բերգլանդ Ինվեստ Էս Այ (Bergland Invest SA) ընկերությունը, այլ ոչ՝ «ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ն) «Կրեատիվ» ՓԲԸ-ն, օգտվելով ուկրաինական օրենսդրությամբ սահմանված նախօգտագործման իրավունքից, արտադրել և շարունակում է արտադրել «ԺԼԹԿԺ» ապրանքային նշանով մակնշվող արտադրանք:

Իրականում սույն գործի համար էական նշանակություն ունի հենց այն փաստը, որ պատասխանողն է հանդիսանում «ԺԼԹԿԺ» ապրանքային նշանով մակնշվող ապրանքների արտադրողը, դրա սեփականատերը ԱՊՀ մի շարք երկրներում և օգտագործողը ԱՊՀ տարածքում:

2. Հայցադիմումի նույն բաժնի 2-րդ կետով հայցվորը հղում է կատարում պատասխանողի և հայցվորի միջև 14.04.2007թ. կնքված ապրանքային նշանի օգտագործման իրավունքի փոխանցման պայմանագրին՝ առանց նշելու նշված պայմանագրի սույն գործի հետ առնչության և իրավաբանական ուժի մասին:

Հայտնել է, որ լիցենզային պայմանագրի առկայությունը, որը կնքվել էր 14.04.2007թ. 1 (մեկ) տարի ժամկետով որևէ առումով չի կարող հիմք հանդիսանալ ՀՀ էկոնոմիկայի նախարարության բողոքարկման խորհրդի 04.11.2008թ. թիվ 27/08 որոշումը անվավեր ճանաչելու համար: Հայցվորը, անտեսելով այս հանգամանքը չի անդրադառնում Հայաստանի տարածքում լիցենզային պայմանագրի իրավաբանական ուժի հարցին, ինչպես նաև դրա բովանդակությանը:

Սույն գործի համար էական նշանակություն ունի այն փաստը, որ Լիցենզային պայմանագիրը վերաբերում է Ուկրաինայում գրանցված «ԺԼԹԿԺ» համակցված ապրանքային նշանին (գրանցման

վկայական թիվ 48955) և որևէ ձևով չի կարող իրավաբանական ուժ ունենալ Հայաստանում: Լիցենզային պայմանագիրը կնքելու պահին «ԺԼԹԿԺ» ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում հայցվորի անունով գրանցված չէր և նշված պայմանագիրը «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի համապատասխան հոդվածների ուժով չունի իրավաբանական ուժ:

Գտնում է, որ հայցվորը միտումնավոր չի նշել այն փաստը, որ ներկայումս ոչ Ուկրաինայում և ոչ էլ՝ իր կողմից մատնանշված Բելառուսում վերջինս չի հանդիսանում «ԺԼԹԿԺ» համակցված ապրանքային նշանի սեփականատեր: Իրականում նշված համակցված ապրանքային նշանի սեփականատեր մատնանշված երկրներում հանդիսանում է մեկ այլ՝ Բերգլանդ Ինվեստ ես Այ (Bergland Invest SA) ընկերությունը: Ինչ վերաբերում է Ղազախստանին, ապա այստեղ ևս իր ունեցած տեղեկություններով «ԺԼԹԿԺ» համակցված ապրանքային նշանի սեփականատեր է հանդիսանում Բերգլանդ Ինվեստ ես Այ (Bergland Invest SA) ընկերությունը:

3. Հայցադիմումի «Գործի նախապատմությունը և փաստերը» բաժնի 6-րդ, ինչպես նաև 9-11 կետերով հայցվորը փորձ է անում վիճարկել պատասխանողի կողմից Վրաստանում (Թբիլիսի, Շերատոն Մետեխի Փելես Հոթել) 2007 թվականի հոկտեմբերի 4-ից - 6-ը անցկացված ԻնտերՖուդ Վրաստան չորրորդ միջազգային ցուցահանդեսին մասնակցելու փաստը:

Հիմնավորելու համար իր այս պնդումը հայցվոր կողմը հղում է կատարում.

- Պատասխանողին ներկայացրած ցուցահանդեսի վերաբերյալ “պաշտոնական ինտերնետային կայքից” քաղվածքին, ինչպես նաև ցուցահանդեսի կատալոգին, որում «Կրեատիվ» ՓԲ ընկերությունը նշված չէ, որպես ցուցահանդեսի մասնակից,

- 24.02.2009թ. Իյթի Գրուփ փիլիպ (ITE Group PLC) ընկերության գրությամբ, որով վերջինս տեղեկացնում է, որ իրենց մոտ եղած կատալոգում «Կրեատիվ» ՓԲԸ-ն նշված չէ,

- Վրաստանի քաղաքացի Վալենտինա Սեմիլետի հայտարարությամբ, որում նա նշում է, որ «Կրեատիվ» ՓԲԸ-ն չի մասնակցել ցուցահանդեսին:

Հայցվորի կողմից վկայակոչված փաստերը չեն համապատասխանում իրականությանը, «Կրեատիվ» ՓԲԸ-ն մասնակցել է ցուցահանդեսին, ինչի վերաբերյալ բավարար ապացույցներ ներկայացվել են բողոքարկման խորհուրդ:

Որևէ ընկերության կողմից որևէ ցուցահանդեսին մասնակցելու փաստի բավարար ապացույց է հանդիսանում այդպիսի ցուցահանդեսի կազմակերպչի կողմից տրված վկայագիրը: Երրորդ անձը նշել է, որ սույն պատասխանին կից ներկայացնում են ցուցահանդեսի կազմակերպչի կողմից «Կրեատիվ» ՓԲԸ-ին տրված վկայագիրը: Միաժամանակ, ղեկավարվելով Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերով, ինչպես նաև ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 2005թ. ապրիլի 12-ի թիվ 85-Ն հրամանով հաստատված «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգ»-ի 19-րդ կետի 6-րդ ենթակետով, «Կրեատիվ» ՓԲԸ կողմից բողոքարկման խորհուրդ է ներկայացվել նաև ցուցահանդեսի կազմակերպիչ «Իտեկա Կավկասիա» ՍՊԸ կողմից 07.02.2008թ. թիվ 08/92 և 08/93 տեղեկանքները առ այն, որ «Կրեատիվ» ՓԲԸ-ն մասնակցել է ցուցահանդեսին:

Անդրադառնալով հայցվորի կողմից ներկայացված «պաշտոնական ինտերնետային կայքի» քաղվածքին և ցուցահանդեսի կատալոգին, հայտնել է, որ դրանք չեն կարող «Կրեատիվ» ՓԲԸ կողմից ցուցահանդեսին չմասնակցելու փաստի ապացույց հանդիսանալ: Ինչպես երևում է ցուցահանդեսի կազմակերպիչ «Իտեկա Կավկասիա» ՍՊԸ կողմից 14.02.2008թ.-ի թիվ 08/10 գրությունից ցուցահանդեսի ինտերնետային կայքում և կատալոգում «Կրեատիվ»

ՓԲ ընկերության ֆիրմային անվանման բացակայությունը պայմանավորված է եղել այն փաստով, որ վերջինս ուշ է դիմել ցուցահանդեսին մասնակցելու համար, երբ արդեն կատալոգի հրատարակումը ձևակերպված է եղել և էջում տեղեկատվությունը տեղադրված է եղել: Նույն նամակով ևս մեկ անգամ հաստատվում է, որ «Կրեատիվ» ՓԲԸ հանդիսանում է ցուցահանդեսի մասնակից: Ի դեպ սա թվով չորրորդ փաստաթուղթն է տրված ցուցահանդեսի կազմակերպչի կողմից (առաջինը՝ վկայագիր, երկրորդը և երրորդը՝ 07.02.2008թ. թիվ 08/92 և 08/93 տեղեկանքները), որով հաստատվում է «Կրեատիվ» ՓԲԸ-ի մասնակցությունը ցուցահանդեսին:

Նշել է, որ հաշվի առնելով հայցվոր կողմի հայցադիմումում արտահայտած այն դիրքորոշումը, որ ցուցահանդեսի կազմակերպիչներ են եղել երկու ընկերություններ՝ «Իտեկա Կավկասիա» ՍՊԸ-ն և Այթի (ITE) ընկերությունը ներկայացրել է նաև.

- Այթի (ITE) ընկերության 22.06.2009թ.-ի նամակը, որով այս ընկերությունը նույնպես հաստատում է, որ «Կրեատիվ» ՓԲԸ մասնակցել է ցուցահանդեսին,

- «Իտեկա Կավկասիա» ՍՊ ընկերության կողմից 08.02.2008թ.-ի թիվ 08/95 նամակը, որով վերջինս հաստատում է, որ «Իտեկա Կավկասիա» ՍՊ ընկերության 2004թ.-ից հանդիսանում է բրիտանական Այթի (ITE) ընկերության միակ գործընկերը և Կրաստանի տարածքում պաշտոնապես ճանաչված միջազգային ցուցահանդեսների և կոնֆերանսների կազմակերպիչը:

Ցուցահանդեսի կազմկոմիտեի կողմից փաստաթղթերը վավերացված չլինելու հայցվորի փաստարկին ի պատասխան հայտնել է, որ օրենսդրության որևէ պահանջ, որով երկու ընկերությունների կողմից կազմակերպվող ցուցահանդեսը պետք է ունենա կազմկոմիտե իրենց հայտնի չէ: Ավելին, կարծում են, որ Կարգի 19-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն ներկայացված բոլոր փաստաթղթերը վավերացված են ցուցահանդեսի վարչական մարմնի կողմից:

Կրաստանի Հանրապետության քաղաքացի Վալենտինա Սեմիլետի հայտարարության վերաբերյալ երրորդ անձը հայտնել է, որ Վալենտինա Սեմիլետը ցուցահանդեսի կազմակերպիչ չի եղել:

21.10.2009թ.-ին Դ. Կոմունաձեճն, ով 09.12.2005թ.-ից մինչև 07.05.2008թ. եղել է «Իտեկա Կավկասիա» ՍՊ ընկերության տնօրեն, գրավոր հայտարարություն է արել և հաստատել, որ Վալենտինա Սեմիլետը աշխատել է «Իտեկա Կավկասիա» ՍՊ ընկերության չորրորդ վրացական միջազգային ցուցահանդեսի անցկացման ժամանակ, բայց չի հանդիսացել իրավասու անձ և կարող է չունենալ ամբողջական, լրիվ և հստակ տեղեկություն նշված ցուցահանդեսին մասնակցած բոլոր ընկերությունների մասին: Ավելին, հայցվոր կողմը, որպես ապացույց է ներկայացնում մի փաստաթուղթ, որը ստորագրված է «Իտեկա Կավկասիա» ՍՊ ընկերության շարքային աշխատողի կողմից:

Գուրման Բրոդզելին գրավոր հաստատել է, որ «Կրեատիվ» փակ բաժնետիրական ընկերության կողմից իրեն 01.10.2007թ.-ին տրված թիվ 754-10 լիազորագրի հիման վրա ներկայացրել է «Կրեատիվ» փակ բաժնետիրական ընկերությունը ցուցահանդեսում:

Հայտնել է, որ հայցադիմումի «Գործի նախապատմությունը և փաստերը» բաժնի 10-րդ կետում հայցվորը, որպես «Կրեատիվ» ՓԲԸ-ի ցուցահանդեսին չմասնակցելու փաստը ապացուցող փաստաթուղթ վկայակոչում է Այթի (ITE) ընկերության 2.02.2009թ. պատասխանը, որով սակայն զուտ փաստվում է, որ «Կրեատիվ» ՓԲԸ-ն չի նշված իրենց մոտ եղած պաշտոնական կատալոգում, որպես ցուցահանդեսին մասնակցող ընկերություն: Ցուցահանդեսի պաշտոնական կատալոգում նշված չլինելը ամենևին էլ չի հաստատում այն փաստը, որ «Կրեատիվ» ՓԲԸ-ն չի մասնակցել ցուցահանդեսին:

Ցուցանմուշի վրա ապրանքային նշանը տեղադրված լինելու

վերաբերյալ հայտնել է, որ հայցադիմումում հայցվոր կողմը վիճարկում է նաև «Կրեատիվ» ՓԲԸ-ի կողմից ցուցանմուշների վրա ապրանքային նշանը տեղադրելու հարցը: Հայտնել է, որ նշված փաստը հաստատելու համար դատարան են ներկայացնում. ա/ 3.10.2007թ.-ին «Կրեատիվ» ՓԲԸ «Իտեկա Կավկասիա» ՍՊ ընկերությանը հասցեագրել է թիվ 23 գրությունը, որով խնդրել է «Կրեատիվ» ՓԲԸ-ին թույլ տալ մասնակցել ցուցահանդեսին և ներկայացնել «ԺԼԹԾԿԺ» ապրանքային նշանով մակնշված յուղ, ճարպ, մարգարին:

բ/ «Իտեկա Կավկասիա» ՍՊ ընկերության կողմից 07.02.2008թ.-ին տրված թիվ 08/92 տեղեկանքը, որով հաստատվում է, որ «Կրեատիվ» ՓԲԸ հանդիսանում է չորրորդ վրացական միջազգային ցուցահանդեսի մասնակիցը և ցուցահանդեսին ներկայացրել է հետևյալ ապրանքը.

1. Արևածաղկի ռաֆինացված բուրունավետ սառեցված «Պ» մակնիշի, «ԺԼԹԾԿԺ» ապրանքային նշանով, 1լ ՊԷՏ-շշով յուղ,
2. Արևածաղկի ռաֆինացված բուրունավետ սառեցված «Պ» մակնիշի, «ԺԼԹԾԿԺ» ապրանքային նշանով, 5լ ՊԷՏ-շշով յուղ,
3. Արևածաղկի ոչ ռաֆինացված ճնշված 1-ին կարգի, «ԺԼԹԾԿԺ» ապրանքային նշանով, 1լ ՊԷՏ-շշով յուղ,
4. Արևածաղկի ոչ ռաֆինացված ճնշված 1-ին կարգի, «ԺԼԹԾԿԺ» ապրանքային նշանով, 5լ ՊԷՏ-շշով յուղ,
5. Խոհարարական ճարպ 41ՏԼ ապրանքային նշանով Յուղ» (պլաստիկ տարա՝ 1 կգ տարողությամբ),
6. Դելիկատեսային մարգարին «Մոլոչնիյ ստոլովիյ», «ԺԼԹԾԿԺ» ապրանքային նշանով, 70%, 250 գր, 500 գր,
7. Դելիկատեսային մարգարին «Սլիվոչնիյ ստոլովիյ», «ԺԼԹԾԿԺ» ապրանքային նշանով, 72%, 250 գր, 500 գր,
8. Դելիկատեսային մարգարին «Սոլնեչնիյ ստոլովիյ», «ԺԼԹԾԿԺ» ապրանքային նշանով, 60%, 250 գր, 500 գր:

գ/ 22.10.2007թ.-ին Մեսսել Սփոլ ընկերությունը «Կրեատիվ» ՓԲԸ հասցեագրել է թիվ 329 գրությունը, որով առաջարկել է համագործակցել «Կրեատիվ» ՓԲԸ կողմից արտադրվող, «ԺԼԹԾԿԺ» ապրանքային նշանով մակնշված ապրանքների իրացման նպատակով, որոնք իրենք տեսել են 2007թ.-ին ցուցահանդեսի ժամանակ: Մեսսել Սփոլ ընկերությունը թիվ 329 գրությամբ նաև առաջարկել է «Կրեատիվ» ՓԲԸ կնքել նախնական պայմանագիր: 30.10.2007թ.-ին Մեսսել Սփոլ ընկերության և «Կրեատիվ» ՓԲԸ միջև կնքվել է մտադրությունների մասին պայմանագիր, որով կողմերը համաձայնվել են համագործակցել սննդամթերք, այդ թվում «ԺԼԹԾԿԺ» ապրանքային նշաններով մակնշված ապրանքների արտադրության և իրացման բնագավառում:

3. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի պահանջների պահպանված լինելու վերաբերյալ երրորդ անձը հայտնել է, որ հայցադիմումում հայցվոր կողմը նշում է, որ պատասխանողը խախտել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները, մասնավորապես՝ որոշման մեջ բացակայում են հայցվորի կողմից ներկայացված ապացույցներով հաստատվող փաստական ֆակտ հանգամանքները, այն է՝ «Կրեատիվ» ՓԲԸ-ի ցուցահանդեսին չմասնակցելու փաստական հանգամանքը, ինչպես նաև ցուցանմուշի վրա ապրանքային նշանը տեղադրված լինելու հետ կապված հարցը, որոշմամբ հստակ հղում է կատարվում «Իտեկա Կավկասիա» ՍՊ ընկերության կողմից 07.02.2008թ.-ին տրված թիվ 08/92 տեղեկանքին և ցուցահանդեսին մասնակցելու մասին հավաստագրին, որով և հերքվում է հայցվորի կողմից նշվածը:

Որպես Վարչարարության մասին օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի խախտում հայցվորի կողմից դիտվել է նաև բողոքարկման խորհրդի կողմից «Իտեկա Կավկասիա» ՍՊ ընկերության կողմից 07.02.2008թ.-ին տրված թիվ 08/92 տեղեկանքի և ցուցահանդեսին մասնակցելու մասին հավաստագրի վրա դրված ստորագրության և

կնիքի իսկությունը ստուգելու համար փորձագիտական եզրակացության առարկա չդարձնելը: Այս դիրքորոշումը ոչ միայն անտրամաբական է այլև հակասում է Վարչարարության մասին օրենքի պահանջներին:

Վարչարարության մասին օրենքի 45-րդ հոդվածով սահմանված է պատասխանողի հայեցողական լիազորությունը, այն է՝ եթե փաստական հանգամանքների ուսումնասիրման համար անհրաժեշտություն է առաջանում, նշանակել փորձագետ, ապա վարչական մարմինն այդ հարցով դիմում է համապատասխան կազմակերպության ղեկավարին կամ համապատասխան անձին՝ այդ մասին ծանուցելով վարույթի մասնակիցներին:

Պատասխանողի՝ փորձաքննություն նշանակելու հայեցողությունը (իրավունքը) սահմանափակված է Վարչարարության մասին օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով:

Վարչարարության մասին օրենքի 75-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական բողոքը քննարկվում է բողոքարկված վարչական ակտի իրավաչափության տեսանկյունից, իսկ հայեցողական լիազորության իրականացման դեպքում՝ նաև նպատակահարմարության տեսանկյունից:

Որևէ պետական մարմնի, այդ թվում պատասխանողի համար սահմանված չէ պարտականություն՝ նշանակելու փորձաքննություն իրավաբանական անձի կողմից ներկայացված որևէ փաստաթղթի վրա եղած ստորագրության և կինքի իսկությունը պարզելու համար:

Պետական մարմինը չի առաջնորդվում ներկայացված փաստաթղթերի կեղծված կամ սխալ լինելու կանխավարկածով: Պետական մարմինն ինքն է որոշում իր հայեցողական լիազորության իրականացման անհրաժեշտությունն ու նպատակահարմարությունը: Ավելին, վարչական վարույթի ընթացքում վարույթի որևէ մասնակից կասկածի տակ չի դրել փաստաթղթի վրա եղած ստորագրության և կինքի իսկության հարցը:

Վկայակոչել է Վարչարարության մասին օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ, մասը, նույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասը:

Գտնում է, որ բողոքարկման խորհուրդը իրավացիորեն արձանագրել է, որ իրավաբանական անձի՝ «Իտեկա Կավկասիա» ՍՊ ընկերության կողմից տրված տեղեկանքը և հավաստագիրը ստորագրվել են փաստաթղթերի վրա նշված անձանց կողմից և կնքվել ընկերության կնիքով:

Անդրադառնալով հայցվորի կողմից հայցադիմումում արված այն վերացական հայտարարությանը, թե իբր բողոքարկման խորհուրդը, խախտելով Վարչարարության մասին օրենքի 37 հոդվածի 1-ին մասի պահանջները, չի ապահովել գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը, նշել է, որ չկա այնպիսի փաստաթուղթ, որի ներկայացնելը նախատեսված լինի օրենքով և որը սույն գործով բողոքարկման խորհուրդը ուսումնասիրած կամ պահանջած չլինի: Բողոքարկման խորհուրդը ուսումնասիրել և գնահատել է հայցվորի և «Կրեատիվ» ՓԲԸ կողմից ներկայացված բոլոր ապացույցները, այդ թվում «Կրեատիվ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված՝ ցուցահանդեսի կազմակերպչի կողմից տրված շնորհակալական վկայագիր չորրորդ միջազգային ցուցահանդեսին մասնակցության համար, ինչպես նաև 07.02.2008թ.-ի թիվ 08/92 տեղեկանքը, որում նաև թվարկված են, թե ինչ ապրանքներ է «Կրեատիվ» ՓԲԸ-ն ցուցադրել ցուցահանդեսում և ինչ ապրանքային նշանով են մակնշված եղել այդ ապրանքները: Այսպիսով, բողոքարկման խորհուրդը ապահովել է փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ կայացնելով միակ օրինական որոշումը:

Որոշումը պարունակում է այն ընդունելու բոլոր էական փաստական և իրավական հիմքերը: Որոշումը լիովին համապատասխանում է Վարչարարության մասին օրենքի պահանջներին:

4. Օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասի վերաբերյալ երրորդ անձը հայտնել է, որ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ եթե արդյունաբերական սեփականության պահպանության մասին

Փարիզյան կոնվենցիայի անդամ որևէ երկրում պահպանվող ապրանքային նշանի սեփականատիրոջ գործակալը կամ ներկայացուցիչը առանց նշանի սեփականատիրոջ թույլտվության իր անունից տվյալ նշանի գրանցման հայտ է ներկայացրել կամ այն գրանցել է Հայաստանի Հանրապետությունում, ապա նշանի սեփականատերն իրավունք ունի՝

ա) արգելելու նշանի գրանցումը.

բ) պահանջելու չեղյալ ճանաչել նշանի գրանցումը, եթե այն արդեն կատարվել է.

գ) արգելել նշանի օգտագործումը գործակալի կամ ներկայացուցչի կողմից, եթե ինքն այդպիսի օգտագործման թույլտվություն չի տվել:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 806-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործակալը վարձատրությամբ պրինցիպալի հանձնարարությամբ, իր անունից, սակայն պրինցիպալի հաշվին կամ պրինցիպալի անունից և նրա հաշվին իրավաբանական ու այլ գործողություններ կատարող անձն է:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 318-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ներկայացուցիչը ուրիշ անձի (ներկայացվողի) անունից լիազորագրի, օրենքի կամ դրա համար լիազորված պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի ակտի վրա հիմնված

լիազորությունների ուժով կնքած գործարքով քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ է ստեղծում, փոփոխում ու դադարեցնում անմիջականորեն ներկայացվողի համար:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում միևնույն

հասկացությունը սահմանելիս կամ միևնույն միտքն արտահայտելիս պետք է կիրառվեն միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ:

Իրավական ակտում տարբեր հասկացությունները չեն կարող օգտագործվել միևնույն տերմինով:

Հետևաբար, օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասում «ներկայացուցիչ» և «գործակալ» բառերը ունեն նույն հասկացությունները ինչպես սահմանված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով:

Հայտնել է, որ սույն պատասխանին կից ներկայացվում են «Կրեատիվ» ՓԲԸ-ի կողմից կնքված առուվաճառքի պայմանագրերի պատճենները: Կնքված առուվաճառքի պայմանագրերի և դրանց կից հավելվածների համաձայն «Կրեատիվ» ՓԲԸ վաճառել է «ԺԼԹԿԺ» ապրանքային նշանով մակնշված ապրանքները ՀՀ տարածքում իրացնելու նպատակով: «Կրեատիվ» ՓԲԸ-ն հանդես է եկել որպես պայմանագրերի կողմ, պայմանագրերը կնքվել են «Կրեատիվ» ՓԲԸ-ի անունից և իրավունքներ և

պարտականություններ առաջացրել «Կրեատիվ» ՓԲԸ-ի համար:

Հետևաբար, նույնիսկ եթե անտեսենք հենց Լիցենզային պայմանագրի առարկան և դրանով սահմանված իրավունքներն ու պարտականությունները, ակնհայտ է, որ «Կրեատիվ» ՓԲԸ-ն որևէ կերպ չի կարող համարվել հայցվորի ներկայացուցիչը կամ գործակալը, իսկ հայցվորի հայցադիմումում արված հայտարարությունները այս առթիվ զուրկ են որևէ իրավաբանական հիմքից:

5. «Կրեատիվ» ՓԲԸ ներկայացուցչի լիազորությունների վերաբերյալ, հայտնել է, որ անդրադառնալով հայցվորի կողմից առարկություններում ներկայացված այն դիրքորոշմանը, թե «Կրեատիվ» ՓԲԸ ներկայացուցիչ է. Նահապետյանը բողոքարկման խրոհիւրդ ներկայացրել է լիազորագրի պատճենը, այլ ոչ՝ բնօրինակը, ինչպես պահանջվում է Վարչարարության մասին օրենքի համաձայն, է. Նահապետյանի լիազորագրի բնօրինակը ներկայացվել է ՀՀ մտավոր սեփականության գործակալություն «Կրեատիվ» ՓԲԸ կողմից գործակալություն «ԺԼԹԿԺ» բառային ապրանքային նշանի գրանցման հայտ ներկայացնելու ժամանակ: Վարչարարության մասին օրենքի 5-րդ հոդվածի համաձայն վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին

արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են: Գտնում է, որ ՀՀ մտավոր սեփականության գործակալություն արդեն իսկ ներկայացվել էր լիազորագրի բնօրինակը և պետական մարմինը բնօրինակ լիազորագիրը ուսումնասիրել էր, հետևաբար բնօրինակ լիազորագիր ներկայացնելու պարտականությունը բովանդակային առումով կատարվել էր:

Անդրադառնալով հայցվորի այն պնդմանը, թե Է. Նահապետյանը իրավասու չէր նշված լիազորագրով ներկայացնել «Կրեատիվ» ՓԲ ընկերությանը վերջինիս ապրանքային նշանների հետ կապված հարցերով՝ հաշվի առնելով, որ լիազորագրով սահմանված էր արտոնագրային հավատարմատարի լիազորությունները Հայաստանի Հանրապետության տարածքում «Կրեատիվ» ՓԲԸ արդյունաբերական սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների ձեռքբերման հետ, իսկ «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ օրենքի համաձայն արդյունաբերական սեփականության օբյեկտներ են գյուտը, օգտակար մոդելը և արդյունաբերական նմուշը, նշել է հետևյալը.

Նախ «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածում սահմանվել են այդ օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները, այսինքն՝ նշված օրենքում օրենսդիրը արդյունաբերական սեփականություն տերմին նշելով այդ օրենքի սահմաններում և նպատակների համար հասկանում է գյուտ, օգտակար մոդել և արդյունաբերական նմուշ: Նշել է, որ իհարկե դժվար էր պատկերացնել, որ ստիպված կլինեն գործի դատական քննության ընթացքում անդրադառնալ այնպիսի հանրահայտ փաստին, ինչպիսին այն է, որ ապրանքային նշանը արդյունաբերական սեփականության օբյեկտ է, սակայն 1883 թվականի մարտի 20-ին ստորագրված արդյունաբերական սեփականության պահպանության մասին Փարիզյան կոնվենցիայի 1-ին հոդվածի 2-րդ մասը հստակ սահմանում է, թե որոնք են արդյունաբերական սեփականության օբյեկտները: Նշված օբյեկտների թվում նշված են նաև ապրանքային նշանները: Ի դեպ Հայաստանի Հանրապետությունը Գերագույն խորհրդի 29 մարտի 1994 թվականի որոշմամբ միացել է Փարիզյան կոնվենցիային և այն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն է:

Նշել է, որ արտոնագրային հավատարմատարի օտարերկրյա ընկերության կողմից տրվող լիազորագրի տիպային ձևը հաստատված է Կարգի թիվ 1 հավելվածով և Է. Նահապետյանի լիազորագիրը, այդ թվում նաև բովանդակային առումով, լիովին համապատասխանում է նշված ձևին:

ԱՊՀ մի շարք երկրների մտավոր սեփականության ոլորտի իշխանությունները, հիմք ընդունելով «Կրեատիվ» ՓԲԸ կողմից ցուցահանդեսում մասնակցելու փաստը, վերջինիս անունով են գրանցել «ԺԼԹԿԺ» ապրանքային նշանը՝ տալով նրան 04.10.2007թ. ցուցահանդեսային առաջնություն:

Նշել է, որ ցուցահանդեսի անցկացման երկրի՝ Կրաստանի մտավոր սեփականության հարցերով ազգային կենտրոնը (Սակպատենտի) «Կրեատիվ» ՓԲԸ անունով գրանցել է «ԺԼԹԿԺ» ապրանքային նշանը՝ տալով դրան 04.10.2007թ. ցուցահանդեսային առաջնություն: «ԺԼԹԿԺ» ապրանքային նշանը «Կրեատիվ» ՓԲԸ-ի անունով գրանցվել է նաև Ղրղզստանում՝ նույն ցուցահանդեսային առաջնությամբ:

Նույն ցուցահանդեսային առաջնությամբ ապրանքային նշան «Կրեատիվ» ՓԲԸ-ի անունով գրանցվել է նաև Ղազախստանում և Բելառուսում (գրանցման թիվ 27759 և 29223 վկայականներ): Ղատարանին խնդրել է հայցը մերժել:

«Կրեատիվ» ՓԲԸ-ն /ներկայացուցիչ Լ. Յորդանյան/ 13.11.2009թ. դատարանին է ներկայացրել հայցադիմումի պատասխանի լրացում և հայտնել, որ արտոնագրային հավատարմատարին օտարերկրյա ընկերության կողմից տրվող լիազորագրի տիպային ձևը հաստատված է ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգի թիվ 1 հավելվածով և է. Նահապետյանի լիազորագիրը, այդ թվում նաև բովանդակային առումով, լիովին համապատասխանում է նշված ձևին:

Լիազորագրով է. Նահապետյանը իրավունք է ունեցել ներկայացնելու «Կրեատիվ» ՓԲԸ շահերը Հայաստանի Հանրապետության տարածքում արդյունաբերական սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքի ձեռքբերման, պահպանության, գործողության մեջ պահելու հետ կապված բոլոր հարցերով:

Ապրանքային նշանի առաջնությունը նշվում է ապրանքային նշանի վկայականի մեջ: Երբ գրանցվում է ապրանքային նշանը և տրամադրվում է ապրանքային նշանի վկայական, վկայականի մեջ նշվում է առաջնությունը, այսպիսով, առաջնությունը միշտ սահմանվում է ապրանքային նշանի գրանցման ժամանակ:

Բողոք ներկայացնելը ևս բովանդակային առումով ուղղված է եղել ապրանքային նշանի նկատմամբ իրավունք ձեռք բերելուն: Այսպիսով, լիազորագրով է. Նահապետյանը իրավունք է ունեցել «Կրեատիվ» ՓԲԸ անունից հանդես գալու բոլոր հարցերով, որոնք կապված են Հայաստանի Հանրապետության տարածքում արդյունաբերական սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքի ձեռքբերման, պահպանության, գործողության մեջ պահելու հետ, որը ներառում է, սակայն չսահմանափակվելով, ցուցահանդեսային առաջնության իրավունքի պահպանումը, ինչպես նաև վարչական բողոքի ներկայացումը:

Անդրադառնալով հայց ներկայացնելու ժամկետներին, հայտնել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն հայցը դատարան կարող է ներկայացվել վիճարկման հայցի դեպքում երկամսյա ժամկետում՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից:

«Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատարանում այն ընդունելու օրվանից վեցամսյա ժամկետում: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ օրենսգրքի կարգավորման իրավահարաբերությունների ոլորտում Հայաստանի Հանրապետության մյուս բոլոր օրենքները պետք է համապատասխանեն օրենսգրքերին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի համաձայն՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը սահմանում է վարչական դատարանում և վճռաբեկ դատարանում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց վարչական և նորմատիվ ակտերի, գործողությունների կամ անգործության դեմ ֆիզիկական և իրավաբանական անձանց դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այլ օրենքներում պարունակվող վարչական դատավարական նորմերը պետք է համապատասխանեն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքին:

«Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի նախաբանի համաձայն՝ «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքով կարգավորվում են ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների գրանցման, իրավական պահպանության և

օգտագործման հետ կապված հարաբերությունները:  
Նշել է, որ վերը նշված նորմերից հետևում է, որ վարչական դատարան հայց ներկայացնելու ժամկետների կարգավորումը ներառվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով կարգավորվող իրավահարաբերությունների ոլորտում: Ուստի, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի ուժով ՀՀ վարչական դատարան հայց ներկայացնելու ժամկետների հետ կապված մյուս բոլոր օրենքները, ներառյալ «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքը պետք է համապատասխանեն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքին: Մինչդեռ, «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասը չի համապատասխանում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքին:

Անդրադառնալով հայցվորի կողմից վկայակոչված «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 7-րդ մասին, հայտնել է, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 7-րդ մասը սույն գործով կիրառելի չէ այն պարզ պատճառով, որ 24-րդ հոդվածի 7-րդ մասը վերաբերում է հավասար իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերին, մինչդեռ, սվյալ դեպքում ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը ունի ավելի բարձր իրավական ուժ քան «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքը: Գտնում է, որ հայցվորը հայցադիմում ներկայացրել է հայցային վաղեմության ժամկետների խախտմամբ, ինչն էլ հիմք է հայցադիմումը մերժելու համար:

«Կրեատիվ» ՓԲԸ-ն /ներկայացուցիչ Լ. Յորդանյան/ 21.12.2009թ. դատարանին է ներկայացրել առարկություններ և հայտնել, որ լսելով նախնական դատական նիստերի արձանագրության համակարգչային արձանագրման կրիչի օրինակը՝ տեղեկացել են, որ նախնական դատական նիստի ժամանակ որպես վկա հարցաքննվել է Վաելնտինա Սեմիլետը:

Հայտնել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձինք, որոնք հիմքեր ունեն կարծելու, որ անհրաժեշտ ապացույցներ ներկայացնելը կարող է դժվար կամ անհնարին դառնալ, իրավունք ունեն գործն իր վարույթն ընդունած դատարանին միջնորդություն ներկայացնելու այդ ապացույցների ապահովման վերաբերյալ: Հայցվորը, միջնորդելով կիրառել հայցի ապահովում, նշում է, որ իրենից դժվարություն է ներկայացնում վկային դատարան հրավիրելը՝ հիմնավորելով իր պահանջը այն հանգամանքով, որ վկան հարևան պետության ռեզիդենտ է, սակայն վկայի բնակվելը հարևան պետությունում՝ Վրաստանում, չի կարող դժվարին կամ անհնար դարձնել վերջինիս կողմից դատարանում դատական քննության ժամանակ որպես վկա ցուցմունք տալը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 32-րդ հոդվածի 1-ին մասում սահմանվում է, որ վկայից ցուցմունք վերցնելը կարող է կատարվել վկայի գտնվելու վայրում այլ դատարանի կողմից դատական հանձնարարության կարգով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վկան դատարան է կանչվում դատական ծանուցման համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգին համապատասխան:

Տվյալ դեպքում չի պահպանվել վկային դատարան կանչելու ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված կարգը:

Ավելին, վկային հարցաքննելու միջնորդությունը դատարանին ներկայացվել է հենց վկայի դատական նիստերի դադարում ներկա լինելու ժամանակ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 3-րդ

մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ դատարանը նախնական դատական նիստում՝ կողմերի հետ քննարկում է ապացուցում պահանջող փաստերի շրջանակը և ապացուցման բեռի բաշխման կանոններին համապատասխան՝ կողմերի միջև բաշխում է ապացուցման բեռը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն վկա կարող է լինել ցանկացած անձ, որին հայտնի է կամ կարող է հայտնի լինել տվյալ գործին վերաբերող որևէ փաստական հանգամանք:

Քանի դեռ դատարանը չի որոշել ապացուցում պահանջող փաստերի շրջանակը, ապա անհնար է եզրահանգում կատարել թե անձին հայտնի, որ փաստական հանգամանքն է, որ վերաբերում է տվյալ գործին կամ թե այդպիսի հանգամանքի ապացուցման բեռը դատավարության որ մասնակիցն է կրում:

Տվյալ դեպքում, դատարանը, չպարզելով ապացուցում պահանջող փաստերի շրջանակը, հարցաքննել է վկա:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ վկան ցուցմունք է տալիս գործին մասնակցող անձանց և դատարանի հարցերին պատասխանելու ձևով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանը պարտավոր է ապահովել, որ կողմերն ունենան հավասար հնարավորություններ գործի քննության ամբողջ ընթացքում: Նույն օրենսգրքի 16-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն երրորդ անձինք օգտվում են կողմի բոլոր իրավունքներից և կրում նրա բոլոր պարտականությունները, բացառությամբ այն իրավունքների և պարտականությունների, որոնք իրենց էությանը տարածելի չեն երրորդ անձանց վրա: Հետևաբար, երրորդ անձը ևս պետք է ունենա հավասար հնարավորություններ հայցվորի հետ, այդ թվում հարցրել տալու հարցաքննվող վկային:

Զպահպանելով վկային դատարան կանչելու և հարցաքննելու ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով ամրագրված և վերը ներկայացված նորմերը՝ դատարանը զրկել է երրորդ անձին վկային հարցրել տալու ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով ամրագրված իրավունքից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ պատշաճ ժամուցված դատավարության մասնակիցների չներկայանալն արգելք չէ ապացույցների ապահովման համար: Այս նորմը վերաբերում է այն դեպքին, երբ դատավարության մասնակիցը պատշաճ ժամուցվել է այն մասին, որ պետք է վկա հարցաքննվի և իմանալով այդ մասին, այնուամենայնիվ չի ներկայացնել դատական նիստին:

ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի համաձայն՝ արգելվում է օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործումը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցներն ապացուցողական ուժ չունեն և չեն կարող դրվել դատարանի վճռի հիմքում:

Գտնում է, որ Վալենտինա Սեմիլետից որպես վկա ցուցմունք վերցնելն իրականացնել է ՀՀ վարչական դատարավության օրենսգրքում ամրագրված կանոնների խախտմամբ:

Երրորդ անձը դատարանին խնդրել է՝ նախնական դատական նիստ ժամանակ հարցաքննված վկա՝ Վալենտինա Սեմիլետի

ցուցմունքները չօգտագործել և չդնել վճռի հիմքում, իսկ եթե այնուամենայնիվ դատարանը օգտագործի վկայի տված ցուցմունքները, հաշվի առնել այն հանգամանքը, որ.

- դատարանին չեն ներկայացվել ապացույցներ, որ վկան այն անձն է, ում հայտնի է ցուցահանդեսի մասնակիցների վերաբերյալ լրիվ և ամբողջական տեղեկություններ: Մինչդեռ «Իտելկա Կավկասիա» ՍՊԸ-ի տնօերնը իր գրությամբ փաստել և հավաստել է, որ

Վալենտինա Սեմիլետը (վկան) չի եղել այն պաշտոնատար անձը, ում հայտնի է լրիվ և ամբողջական տեղեկություններ

ցուցահանդեսին մասնակցած բոլոր ընկերությունների մասին,

- հայցվորի կողմից վկային տրված հարցերը կրել են ուղղորդող բնույթ,  
- վկան՝ ի պատասխան դատարանի հարցին, թե հանարավոր է չմասնակցել և ստանալ վկայագիր, ասել է, որ հանարավոր չէ: Իսկ «Կրեատիվ» ՓԲԸ-ին տրվել է մասնակցության վկայագիր:

«Կրեատիվ» ՓԲԸ-ն /ներկայացուցիչ Լ. Յորդանյան/ 29.12.2009թ. դատարանին է ներկայացրել լրացուցիչ առարկություններ և հայտնել, որ հայցվորի ներկայացրած հայցի առարկան լրացնելու վերաբերյալ դիմումը և առարկություններն անհիմն են՝ ստորև նշված հիմնավորումներով.

Հայցադիմումի «Գործի նախապատմությունը և փաստերը» բաժնի 1-ին կետում հայցվորը նշում է, որ վերջինս մինչև Հայաստանում «ԺԼԹԿԺ» ապրանքային նշանի գրանցումը նշված ապրանքային նշանը օգտագործել և գրանցել է ԱՊՀ այլ երկրներում (Ուկրաինա, Բելառուս, Ղազախստան): Իրենց կողմից ներկայացված փաստաթղթերը՝ այն է, թե որ երկրում ում անունով է գրանցված ապրանքային նշանը հերքում է հայցվորի այն պնդումը, որ «ԺԼԹԿԺ» ապրանքային նշանը ԱՊՀ այլ երկրներում օգտագործել և գրանցել է հայցվորը:

Անդրադառնալով ներկայացված ապացույցների վերաբերելիությանը, նշել է, որ դրանք վերաբերում են գործին և դրանցով հերքվում են հայցվորի կողմից հայցադիմումի մեջ ներկայացված աղավաղված փաստերը:

«Կրեատիվ» ՓԲԸ-ի՝ 2007 թվականի հոկտեմբերի 4-ից 6-ը անցկացված ԻնտերՖուդ Վրաստան չորրորդ միջազգային ցուցահանդեսին մասնակցելու կապակցությամբ հայցվորի ներկայացրած առարկությունների վերաբերյալ հայտնել է, որ տեխնիկական զարգացվածության ներկայիս պայմաններում փաստաթղթերի փոխանցումը մեկ երկրից մյուս երկիր բացարձակ դժվարություն չի ներկայացնում, ավելին՝ ժամանակատար չէ: Մասնավորապես, բուպեների ընթացքում փաստաթուղթը ֆաքսով կարող է ուղարկվել մեկ այլ պետության տարածքում գտնվող ընկերությանը: Ավելին, ցուցահանդեսին մասնակցության համար դիմելու ժամկետային որևէ սահմանափակում նախատեսված չի եղել:

Ինչ վերաբերում է «Իտեկա Կավկասիա» ՍՊԸ տնօրեն պարոն Մամեդովի՝ 30.04.2009թ. թիվ 24 գրությանը տրված պատասխանին, երրորդ անձը նշել է, որ այդ գրությամբ ընդամենը տեղեկություններ է պարունակում նախկին տնօրեն պարոն Կալանդաձեի կողմից պարոն Մամեդովին փոխանցված փաստաթղթերի մասին: Սույն դատական գործի շրջանակներում չի քննվում այն հարցը, թե նախկին տնօրեն պարոն Կալանդաձեն ինչ փաստաթղթեր է հանձնել պարոն Մամեդովին: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաբերելի է այն ապացույցը, որը ավելի կամ պակաս հավանական է դարձնում վեճը լուծելու համար էական նշանակություն ունեցող որևէ փաստի գոյությունը, քան այն կլիներ առանց այդ ապացույցի: Ոչ վերաբերելի ապացույցն անթույլատրելի է: Երրորդ անձը դատարանին խնդրել է՝ «Իտեկա Կավկասիա» ՍՊԸ տնօրենի 30.04.2009թ. թիվ 24 գրության պատասխանը ճանաչել ոչ վերաբերելի ապացույց:

Փաստաթղթերը՝ «Իտեկա Կավկասիա» ՍՊԸ տնօրեն Դ. Կոնունաձեի կողմից 07.02.2008թ. տրված թիվ 08/92, 08/93 տեղեկանքները, 08.02.2008 08/95 նամակը ներկայացվել է դատարանին և փաստ է, որ այդ փաստաթղթերն առկա են, հետևաբար անհեթեթ է վիճարկել այդ փաստաթղթերի առկայությունը: Անդրադառնալով կատալոգում «Կրեատիվ» ՓԲԸ-ի նշված չլինելու հանգամանքին, նշել է, որ կատալոգում ներառված լինելը և ցուցահանդեսին մասնակցելը չեն նույնանում:

Կատալոգում չի ներկայացվում ցուցահանդեսին մասնակցած բոլոր ընկերությունների սպառիչ ցանկը:

Այժմի (ՋեյԿի) Լիմիթիդ ընկերությունը հանդիսանում է

ցուցահանդեսի կազմակերպիչ՝ Այթի Գրուփ ՓԻԷՍի ընկերության դուստր ընկերությունը, ինչը հավաստվում է ինտերնետային էջում պարունակվող տեղեկություններով:

Վալենտինա Սեմիլետի հայտարարության կապակցությամբ նշել է, որ յուրաքանչյուր ընկերության անունից հանդես գալու իրավունք ունի այդ ընկերության գործադիր մարմնի ղեկավարը: «Իտեկա Կավկասիա» ՍՊԸ-ի, անունից հանդես գալու իրավունք ունի ընկերության տնօրենը: Վալենտինա Սեմիլետը աշխատել է «Իտեկա Կավկասիա» ՍՊԸ-ի տնօրենի ղեկավարության ներքո: Հայցվորը՝ հերքելով ընկերության տնօրենի գրավոր հայտարարությունը, ներկայացնում է ընկերության աշխատակցի հայտարարությունը, այն պարագայում, երբ «Իտեկա Կավկասիա» ՍՊԸ տնօրենի, ընկերության անունից հանդես գալու իրավասություն ունեցող անձի՝ Դ. Կումունաձեի 21.10.2009թ. գրավոր հայտարարությամբ տնօրենը ուղղակիորեն փաստում և հավաստում է, որ Վալենտինա Սեմիլետը, «Իտեկա Կավկասիա» ՍՊԸ-ի այն լիազորված անձը չէր, ով տիրապետում է ցուցահանդեսին մասնակցած բոլոր ընկերությունների մասին ամբողջական տեղեկություններին: Հայցվորի հայտարարությունը, որ երրորդ անձի կողմից ներկայացված ապացույցներով վերջինիս կողմից ցուցահանդեսին մասնակցելու փաստը չի կարող հավաստվել, բացարձակ անհիմն է: Ի լրումն ներկայացված բազում փաստարկների և ապացույցների, նշել է, որ հայցվորը, նման եզրակացություն անելով, նույնիսկ չի անդրադարձել «Կրեատիվ» ՓԲԸ-ի ներկայացրած բազում այլ ապացույցների, որոնցով միանշանակ փաստվում և հավաստվում է «Կրեատիվ» ՓԲԸ-ի մասնակցությունը ցուցահանդեսին:

«Կրեատիվ» ՓԲԸ-ն (ներկայացուցիչ է. Նահապետյան) 27.10.2009թ. դատարանին է ներկայացրել հայցադիմումի պատասխան և հայտնել, որ հայցի հիմքերը լրացնելու մասին իր դիմումի մեջ հայցվորը նշում է, որ ««Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի վերջին պարբերությամբ ամրագրված նորմի պահանջներից ելնելով, ըստ էության, «Կրեատիվ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ է. Նահապետյանի կողմից պետք է ներկայացվեր լիազորագրի բնօրինակը և ոչ թե պատճենը, մինչդեռ լիազորագիրը ներկայացվել է պատճենի տեսքով»:

Հայտնել է, որ Մտավոր Սեփականության Գործակալություն 2008 թվականի մայիսի 13-ին ներկայացվել է «Կրեատիվ» ՓԲԸ-ի կողմից տրված լիազորագրի բնօրինակը, որը գտնվում է թիվ 20080303 «ԺԼԹԾԿԺ» ապրանքային նշանի հայտում և որը պահվում է Մտավոր Սեփականության Գործակալությունում այդ հայտի նյութերի մեջ, ընդ որում Մտավոր Սեփականության Բողոքարկման Խորհուրդը ներկայացված դիմումի մեջ նշվել է, որ լիազորագրի բնօրինակը գտնվում է թիվ 20080303 հայտում, այնպես որ, հայցվորի ենթադրությունը, որ ներկայացվել է միայն լիազորագրի պատճենը անհիմն է և պատասխանողը իրավացիորեն համարել է պատշաճ է. Նահապետյանի լիազորությունները: Այդ լիազորագրով տրված են եղել հետևյալ լիազորությունները. «... ներկայացնել «Կրեատիվ» ՓԲԸ-ի շահերը Հայաստանի Հանրապետության տարածքում արդյունաբերական սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքի ձեռքբերման, պահպանության, գործողության մեջ պահելու հետ կապված բոլոր հարցերով:»

Հայցվորը նշում է, որ «Է. Նահապետյանը չի ունեցել լիազորություններ «Կրեատիվ» ՓԲԸ-ի շահերը ներկայացնելու ապրանքային նշանի հետ կապված հարցերով: Հայցվորի նշված եզրահանգումը պայմանավորված է նրանով, որ լիազորագրի բովանդակության համաձայն՝ Է. Նահապետյանը լիազորվել է ներկայացնել «Կրեատիվ» ՓԲԸ-ի շահերը ՀՀ տարածքում արդյունաբերական սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքի ձեռքբերման, պահպանության, գործողության մեջ պահելու հետ կապված բոլոր հարցերով: Հայցվորը, մեջբերում է

«Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը, որտեղ ասված է, որ այդ օբյեկտները հանդիսանում են արդյունաբերական սեփականության օբյեկտներ: Ելնելով դրանից, հայցվորը եզրակացնում է, որ ապրանքային նշանը չի հանդիսանում արդյունաբերական սեփականության օբյեկտ, հետևաբար է. Նահապետյանը իրավասու չէր «Կրեատիվ» ՓԲԸ-ի 26.03.2008թ. լիազորագրի հիման վրա ներկայացնել ապրանքային նշանի հետ կապված ընկերության շահերը: Գյուտերը, օգտակար մոդելները, արդյունաբերական նմուշները հանդիսանում են արդյունաբերական սեփականության օբյեկտ, բայց ոչ միայն այդ օբյեկտները:

Հայտնել է, որ ի գիտություն հայցվորի ներկայացուցչի բացի գյուտերից, օգտակար մոդելներից և արդյունաբերական նմուշներից արդյունաբերական սեփականության օբյեկտ են հանդիսանում նաև ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, սպասարկման նշանները, ապրանքների ծագման տեղանունները, ինչպես նաև անբարեխիղճ մրցակցության կանխումը: Այդ բոլոր օբյեկտները հեղինակային իրավունքի հետ միասին կազմում են «մտավոր սեփականություն» հասկացությունը: Այս հասկացությունների բացահայտումը տրված է «Փարիզյան Կոնվենցիայի» հոդված 1(2)-ում, (Հայաստանի Հանրապետության համար գործում է 25.12.1991թ.):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդված 1100-ի և անվանումը, և բովանդակությունը քաղաքացիական շրջանառության մասնակիցների, ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների անհատականացման միջոցները, այդ թվում և ապրանքային նշանները, միանշանակ դասում են մտավոր սեփականության օբյեկտներին, որպես արդյունաբերական սեփականության օբյեկտ:

Գտնում է, որ «Կրեատիվ» ՓԲ ընկերության ներկայացուցիչ է. Նահապետյանը լիովին լիազորված է եղել «Կրեատիվ» ընկերության կողմից ներկայացնել շահերը նաև ապրանքային նշանին առնչվող բոլոր հարցերով:

Գործի քննությանը ներկայացած երրորդ անձի ներկայացուցիչները պնդել են ներկայացված առարկությունները և դատարանին խնդրել հայցը մերժել:

Հայցվորի առարկությունները հայցադիմումի պատասխանների դեմ «ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ն 13.11.2009թ. դատարանին է ներկայացրել իր առարկությունները «Կրեատիվ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Լ.

Յորդանյանի կողմից ներկայացված պատասխանի վերաբերյալ և հայտնել, որ սույն վարչական գործի հարուցման համար հիմք հանդիսացած հայցի առարկան է հանդիսանում ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդի 2008 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 27/08 որոշումն անվավեր ճանաչելու պահանջը: Հայցադիմումում «ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ն ներկայացրել է այն փաստական և իրավական հիմքերը, որոնց համադրության արդյունքում հանգել է վիճարկվող վարչական ակտի ապօրինի լինելու վերաբերյալ եզրահանգման: Նման պարագայում սույն գործով ապացուցման առարկայի մեջ պետք է ներառվեն այնպիսի փաստական հանգամանքներ, որոնց հաստատումը կամ հերքումը հնարավորություն կտա պարզելու արդյոք վարչական մարմինը (սույն գործով պատասխանողը) իր տիրապետման տակ եղած նյութերով իրականացրած վարչարարության արդյունքում ուներ բավարար հիմքեր վիճարկվող որոշումը կայացնելու համար, թե՛ ոչ:

Հայցվոր կողմը գտնում է, որ այն հանգամանքը, թե «ԺԼԹԾԿԺ» ապրանքային նշանի նկատմամբ, որ երկրում ով է դրա նկատմամբ իրավատեր սույն վարչական գործով որևէ էական նշանակություն չունի:

Հայտնել է, որ զուտ օբյեկտիվության նկատառումներից ելնելով, ցանկանում է փաստել, որ Երրորդ անձի դիրքորոշումն առ այն, որ

Ուկրաինայում և Բելառուսում «ԺԼԹԺԿԺ» ապրանքային նշանի նկատմամբ սեփականատեր է հանդիսանում Բերգլանդ Ինվեստ Էս Այ ընկերությունը, ուղղակի առարկայագուրկ է:

Նշված փաստերի հիմնավորման նկատառումով երրորդ անձը դատարանին է ներկայացրել համացանցից (ինտերնետից) քաղված քննարկներ, որոնցով փորձում է հավաստել Բերգլանդ Ինվեստ Էս Այ ընկերության՝ ԱՆ-ի նկատմամբ սեփականատեր լինելու հանգամանքը:

Հայտնել է, որ Բելառուսում և Ուկրաինայում հայցվորի սեփականության իրավունքը «ԺԼԹԺԿԺ» ապրանքային նշանի նկատմամբ գրանցվել է 10.04.2003թ.:

Ուկրաինայում Բերգլանդ Ինվեստ Էս Այ ընկերության՝ ապրանքային նշանի նկատմամբ սեփականատեր լինելու հանգամանքի հավաստման կապակցությամբ ներկայացված ապացույցում որևէ կերպ նշված չէ, որ Բերգլանդ Ինվեստ Էս Այ ընկերությունը հանդիսանում է ապրանքային նշանի սեփականատեր:

Անդրադառնալով Բելառուսում Ինվեստ Էս Այ ընկերության՝ ապրանքային նշանի նկատմամբ սեփականատեր լինելու հանգամանքի հավաստման կապակցությամբ ներկայացված ապացույցին, հայցվորը նշել է, որ դրանով ընդամենը հավաստվում է «ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ի դիրքորոշումն առ այն, որ վերջինս

ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքների սեփականատեր է: Մասնավորապես, այդ ապացույցում որպես հայտատու (ապրանքային նշանի նկատմամբ իրավունքները գրանցելու խնդրանքով դիմած, ուստիև դրա հիման վրա բացառիկ իրավունքներ ունեցող անձ) նշված է «ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ի անվանումը, իսկ որպես իրավատեր նշված է Բերգլանդ Ինվեստ Էս Այ ընկերությունը: Հայցվորը հայտնել է նաև որ թարգմանությունը կատարված է սխալ: Ուստի տեքստում Բերգլանդ Ինվեստ Էս Այ ընկերությունը նշված է որպես տիրապետող, սակայն թարգմանության մեջ չգիտես ինչու Բերգլանդ Ինվեստ Էս Այ ընկերությունը նշվել է որպես սեփականատեր:

«ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ն հայտնել է, որ այնուամենայնիվ երրորդ անձի կողմից ներկայացված ապացույցները վերաբերելի չեն և դրանով պայմանավորված անթույլատրելի են: Նման եզրահանգման համար իրավական հիմք է հանդիսանում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված նորմը: Գտնում է, որ նման պարագայում «Կրեատիվ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված «ապացույցներով» չի հավաստվում սույն վարչական գործով վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող որևէ փաստի գոյությունը:

Ինչ վերաբերում է երրորդ անձի դիրքորոշմանն առ այն, որ ինքը 2002 թվականից հանդիսանում է ապրանքային նշանով մակնշված արտադրանքի արտադրող և այն արտադրում է Ուկրաինայում և արտահանում ԱՊՀ երկրներ, որևէ էական նշանակություն չունի սույն գործի համար, քանի որ այդ փաստի առկայությունը կամ բացակայությունը որևէ կերպ չի կարող հիմնավորել պատասխանողի կողմից վիճարկվող ակտի ընդունման օրինական և հիմնավոր լինելու հանգամանքը:

Հայցվորը անդրադառնալով երրորդ անձ «Կրեատիվ» ՓԲԸ-ի կողմից 2007թ. հոկտեմբերի 4-6-ը Կրաստանում (Թբիլիսի, Մետելի Պալաս Հոտել) կազմակերպած ցուցահանդեսին մասնակցելու հանգամանքին նշել է, որ.

ա) երրորդ անձը ներկայացրած պատասխանով փորձել է հիմնավորել այն հանգամանքը, որ իբրև թե մասնակցել է ցուցահանդեսին: Ի հերքումն «ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ի այն դիրքորոշման, որ «Իտեկա Կավկասիա» ՍՊԸ-ն 14.02.2008թ. թիվ 08/10 գրությամբ հայտնել է, որ «Կրեատիվ» ՓԲԸ-ն անվանումը նշված չէ ցուցահանդեսի պաշտոնական կատալոգում, երրորդ անձը նշել է, որ ցուցահանդեսին մասնակցելու համար ուշ է դիմել և դիմելու ժամանակ կատալոգն արդեն իսկ ձևավորված և տեղադրված էր համացանցի համապատասխան էջում: «Կրեատիվ»

ՓԲԸ-ի կողմից ցուցահանդեսին մասնակցելու հանգամանքը վերջինիս ներկայացուցիչը փորձել է նաև հիմնավորել «Իտեկա Կավկասիա» ՍՊԸ-ի տնօրեն Դ. Կոմունաձեի կողմից 07.02.2008թ.տրված թիվ 08/92, 08/93 տեղեկանքներով: Հայտնել է, որ պատասխանում ներկայացված տույն դիրքորոշումը չի կարող ընդունվել մի քանի պատճառներով: Մասնավորապես, պատասխանում նշվել է, որ երրորդ անձն ուշ է դիմել ցուցահանդեսին մասնակցելու խնդրանքով: Պատասխանին կից ներկայացրած երրորդ անձի տնօրենի 03.10.2007թ. թիվ 23 գրությամբ հավաստվում է, որ երրորդ անձը նոր միայն 03.10.2007թվականին է դիմել ցուցահանդեսին մասնակցելու դիմումով: Նման պարագայում հարց է, թե կապի ինչ միջոցով է գրությունը հասել «Իտեկա Կավկասիա» ՍՊԸ-ին և ինչ ժամանակահատվածում, այն դեպքում երբ 04.10.2007-ից արդեն ցուցահանդեսը սկսվել է: Ավելին՝ ոչ պակաս կարևոր հարց է նաև, թե ինչպես է երրորդ անձը կարողացել մեկ աշխատանքային օրից պակաս ժամանակում կատարել այն բոլոր գործողությունները, որոնք հարկավոր էր կատարել մինչև մասնակցելը (մասնակցության վճար վճարելը, տաղավարի տարածքի դիմաց վճարել և այլն): Անդրադառնալով նրան, որ «Իտեկա Կավկասիա» ՍՊԸ-ի տնօրեն Դ. Կոմունաձեի կողմից 07.02.2008թ. տրված թիվ 08/92, 08/93 տեղեկանքներով, 08.02.2008թ. թիվ 08/95 նամակով հավաստվում է երրորդ անձի՝ ցուցահանդեսին մասնակցելու փաստը, ապա «ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ն նշել է, որ ցանկանում է՝ ի հերքումն այդ ապացույցներով ներկայացված տեղեկությունների, ինչպես նաև երրորդ անձի մասնակցության, դատարանին ներկայացնել ընկերության տնօրենի 30.04.2009թ. թիվ 24 գրությունը՝ ուղղված «Իտեկա Կավկասիա» ՍՊԸ-ին, և վերջինիս պատասխան գրությունը:

Ընկերությունը «Իտեկա Կավկասիա» ՍՊԸ-ին ուղղված 30.04.2009թ. թիվ 24 գրությամբ խնդրել է հաստատել «Կրեատիվ» ՓԲԸ-ի կողմից ցուցահանդեսին մասնակցելու հանգամանքը՝ կից ներկայացնելով երրորդ անձի կողմից վկայակոչված 07.02.2008թ. տրված թիվ 08/92, 08/93 տեղեկանքները:

Ի պատասխան Ընկերության 30.04.2009թ. թիվ 24 գրության՝ 09.05.2008թ. գրությամբ «Իտեկա Կավկասիա» ՍՊԸ-ի տնօրեն Խայամ Մամեդովը պատասխանել է, որ իր կողմից նախկին տնօրեն Դ. Կոմունաձեից, որը ղեկավարում էր ընկերությունը մինչև 2008թ. մայիս ամիսը, ստացված փաստաթղթերի մեջ, ինչպես նաև իրենց մոտ առկա պաշտոնական կատալոգի համաձայն, ցուցահանդեսի մասնակիցների մեջ «Կրեատիվ» ՓԲԸ անվանմամբ ընկերություն չկա:

Երրորդ անձը ցուցահանդեսին մասնակցելու հիմնավորման կապակցությամբ ներկայացրել է Այթի Ի (Ջեյ Վի) Լիմիթիդ ընկերության կողմից ներկայացված գրություն, որով չի հավաստվում երրորդ անձի մասնակցության փաստը: Մասնավորապես, Այթի Ի (Ջեյ Վի) Լիմիթիդ ընկերությունը չի հանդիսացել ցուցահանդեսի կազմակերպիչ, ուստիև չէր կարող որպես ցուցահանդեսի կազմակերպիչ տեղեկություն տալ առ այն, որ երրորդ անձը մասնակցել է ցուցահանդեսին:

Երրորդ անձը՝ Վալենտինա Սեմիլետի նոտարական կարգով տրված հայտարարության հերքման կապակցությամբ պատասխանում նշել է, որ վերջինս ցուցահանդեսի կազմակերպիչ չի եղել: Ավելին՝ հերքման կապակցությամբ դատարանին է ներկայացրել նաև Դ. Կոմունաձեի 21.10.2009թ. հայտարարությունն առ այն, որ ցուցահանդեսի անցկացման ժամանակ Վալենտինա Սեմիլետն աշխատել է «Իտեկա Կավկասիա» ՍՊ ընկերությունում, սակայն չի հանդիսացել իրավասու անձ և կարող է չունենալ ամբողջական, լրիվ և հստակ տեղեկություն ցուցահանդեսին մասնակցած բոլոր ընկերությունների մասին:

Հայցվորի հավաստմամբ նշված ապացույցով ուղղակիորեն չի հավաստվում այն հանգամանքը, որ Վալենտինա Սեմիլետը չէր

կարող իմանալ արդյոք երրորդ անձը մասնակցել է ցուցահանդեսին, թե՛ ոչ: Նման եզրահանգումը պայմանավորված է նրանով, որ Դ. Կոմունաձեի 21.10.2009թ. հայտարարության մեջ նշվում է ընդամենը վերջինիս ենթադրությունը: Հայտնել է, որ ապացույցով որևէ փաստի հավաստումը կարող է լիարժեք և արժանահավատ լինել միայն ու միայն այն պարագայում, երբ վկայակոչված ապացույցն ուղղակիորեն հավաստում է ապացուցման ենթակա փաստը, այլ ոչ թե ենթադրություններ է պարունակում հավաստվող փաստի գոյության կամ բացակայության մասին:

Հայցվոր կողմը գտնում է, որ երրորդ անձի կողմից ներկայացված ապացույցներով վերջինիս կողմից ցուցահանդեսին մասնակցելու փաստը չի կարող հավաստվել:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

ՀՀ առևտրի և տնտեսական գարգացման նախարարի 2005 թ. ապրիլի 12-ի N 85-Ն հրամանով հաստատված «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգ»-ի 19-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ հայտին կցվում են՝ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն ցուցահանդեսային առաջնություն խնդրարկելու դեպքում, այդ պահանջի իսկությունը հաստատող փաստաթուղթը: Նշված փաստաթուղթը կարող է ներկայացվել հայտը Գործակալություն ներկայացնելու թվականից երեք ամսվա ընթացքում:

Ցուցահանդեսային առաջնություն խնդրարկելու մասին հայտատուն պարտավոր է նշել հայտը ներկայացնելիս կամ հայտի ներկայացման թվականից երկու ամսվա ընթացքում:

Հայտատուի կողմից ներկայացված փաստաթուղթը պետք է հաստատի ցուցահանդեսի կարգավիճակը որպես Փարիզյան Կոնվենցիայի մասնակից որևէ պետության տարածքում կազմակերպված պաշտոնական կամ պաշտոնապես միջազգային ճանաչված լինելը և պարունակի ապրանքը ցուցադրող անձի անվանումը, նշանը, դրանով նշված ապրանքների ցանկը, ինչպես նաև ցուցահանդեսում ցուցանմուշների բաց ցուցադրման թվականը: Հայտատուի կողմից ներկայացված փաստաթուղթը վավերացվում է տվյալ ցուցահանդեսի վարչական մարմնի կամ կազմկոմիտեի կողմից:

Վերոգրյալ նորմերի տառացի մեկնաբանության և համակարգային վերլուծության արդյունքում Հայցվոր կողմը գտնում է, որ երրորդ անձի՝ ցուցահանդեսին մասնակցելու հանգամանքը կարող էր հավաստվել միայն ցուցահանդեսի վարչական մարմնի կամ կազմկոմիտեի կողմից վավերացված փաստաթղթով:

Հայցվոր կողմը գտնում է, որ ցուցահանդեսի վարչական մարմնի կամ կազմկոմիտեի կողմից վավերացված փաստաթղթի՝ որպես մասնակցության փաստը հավաստող ապացույցի բովանդակությանը և ներկայացմանը նույնպես ներկայացվում են որոշակի պահանջներ, որոնց չպահպանման դեպքում համապատասխան սուբյեկտը /սույն գործով երրորդ անձը/ չի կարող օգտվել ցուցահանդեսային առաջնությունից:

Հայցվորը անդրադարձել է այն հանգամանքին, որ երրորդ անձը պնդում է, թե մասնակցել է ցուցահանդեսին և միայն ուշ մասնակցելու պատճառով է, որ իր անվանումը ցուցահանդեսի պաշտոնական կատալոգում չի նշվել:

Այդ կապակցությամբ հայցվորը հայտնել է, որ կատալոգում պաշտոնապես նշված է այն տաղավարների քանակը և համարները, որոնք զբաղեցված են եղել ցուցահանդեսի մասնակիցների կողմից և հասկանալի չէ, թե՛ երրորդ անձն այդ դեպքում, որ տաղավարում է իր ապրանքները ցուցադրել:

Հայցվոր կողմի խորին համոզմամբ վերոգրյալով հիմնավորվում է այն հանգամանքը, որ երրորդ անձը չի մասնակցել ցուցահանդեսին, ուստի, թե վերջինս ինչ ապրանքային նշաններ է ցուցադրել ինչ ապրանքների վրա մակնշված որևէ էական նշանակություն ունենալ չի կարող:

Երրորդ անձի ներկայացուցիչ Էդ. Նահապետյանի կողմից պատասխանողին լիազորագրի բնօրինակը չներկայացնելու և 04.11.2008թ. թիվ 27/08 որոշման վիճարկման կապակցությամբ լիազորություններ չունենալու մասով, հայցվորը հայտնել է, որ նշված փաստերի մասով իր դիրքորոշումը ներկայացրել է թե պատասխանողի կողմից ներկայացված, թե երրորդ անձի մյուս ներկայացուցիչ Էդ. Նահապետյանի կողմից ներկայացված պատասխանի առարկություններում::

Հայցվոր կողմը դատարանին խնդրել է՝ ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի պահանջներով, ընկերության հայցն ամբողջությամբ բավարարել:

«ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ն 13.11.2009թ. դատարանին է ներկայացրել «Կրեատիվ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Է. Նահապետյանի ներկայացրած պատասխանի վերաբերյալ իր առարկությունները և հայտնել, որ պատասխանով, ըստ էության, Էդուարդ Նահապետյանը փորձել է հիմնավորել այն հանգամանքը, որ ինքը լիազորություն է ունեցել Հայցվորի «ԺԼԹԿԺ» ապրանքային նշանի թիվ 13021 գրանցումը անվավեր ճանաչելու դիմում ներկայացնելու համար, քանի որ այն իբրև թե գրանցվել է «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված նորմի խախտումով և խոչընդոտում էր թիվ 20080303 հայտով «Կրեատիվ» ՓԲԸ-ի «ԺԼԹԿԺ» ապրանքային նշանի գրանցմանը և այդ նշանի նկատմամբ «Կրեատիվ» ՓԲԸ-ի բացառիկ իրավունքի ձեռք բերմանը:

Հայտնել է, որ իրենց պնդմամբ երրորդ անձի նշված դիրքորոշումն առարկայագուրկ է հետևյալ պատճառաբանությամբ:  
«Կրեատիվ» ՓԲ ընկերությունը 26.03.2008թ. լիազորագրով Էդուարդ Նահապետյանին լիազորել է ներկայացնել իր շահերը ՀՀ տարածքում արդյունաբերական սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքի ձեռք բերման, պահպանության, գործողության մեջ պահելու հետ կապված բոլոր հարցերով:  
Լիազորագրի տեքստի բառացի մեկնաբանությունից ուղղակիորեն բխում է, որ Է. Նահապետյանը 26.03.2008թ. լիազորագրով ցուցահանդեսային առաջնության իրավունքի պահպանման լիազորություն չի ունեցել:

Է. Նահապետյանի կողմից ներկայացված վարչական բողոքը չի կարող մեկնաբանվել որպես ապրանքային նշանի նկատմամբ իրավունքի ձեռք բերման լիազորության իրականացում: Այլ կերպ ասած՝ ապրանքային նշանի նկատմամբ իրավունքի ձեռք բերում հասկացությունը ծավալային առումով իր մեջ չի ներառում վարչական բողոք ներկայացնելու լիազորություն:

Նման եզրահանգման համար իրավական հիմք է հանդիսանում «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված նորմը, ըստ որի՝ ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքը ծագում է դրան իրավական պահպանություն տրամադրելու պահից և պատկանում է դրա սեփականատիրոջը: Նորմի բառացի մեկնաբանությունից ուղղակիորեն բխում է, որ ապրանքային նշանի նկատմամբ իրավունքը կարող է ձեռք բերվել դրա գրանցման միջոցով: Այսինքն՝ ապրանքային նշանի ձեռք բերումը (դրա մեջ ներառված գործողությունների ամբողջությունը) ժամանակային առումով նախորդում է ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի ծագմանը (գրանցմանը): ՀՀ օրենսդրությամբ սահմանված է այն գործողությունների

ամբողջությունը, որոնք նախորդում են ապրանքային նշանի նկատմամբ իրավունքի գրանցմանը: Նշված գործողությունների շրջանակը ըստ էության սահմանված է «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքով և ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 12.04.2005թ. թիվ 85-Ն հրամանով հաստատված Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման մասին կարգով:  
Տվյալ պարագայում, 26.03.2008թ. լիազորագրով Է. Նահապետյանին վերապահված ապրանքային նշանի նկատմամբ իրավունքի ձեռք բերման հետ կապված բոլոր հարցերով «Կրեատիվ» ՓԲ ընկերության շահերի ներկայացման լիազորությունը չի կարող անհիմն տարածական մեկնաբանման ենթարկվել և դրա մեջ չի կարող ներառվել Է. Նահապետյանի կողմից վարչական բողոքների ներկայացման լիազորություն:  
Նշված եզրահանգումն հավաստվում է նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 1-ին մասի 3-րդ պարբերությամբ սահմանված նորմով, համաձայն որի՝ եթե դիմումը ներկայացվում է ներկայացուցչի միջոցով, ապա պետք է ներկայացվի նաև օրենքով սահմանված կարգով տրված լիազորագիր:  
Նշված նորմից ուղղակիորեն բխում է, որ լիազորված անձը պետք է ունենա հստակ ամրագրված լիազորություն լիազորողի անունից վարչական մարմինն ղեկավարելու համար:

«ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ն 07.12.2009թ. դատարանին է ներկայացրել «Կրեատիվ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Լ. Յորդանյանի ներկայացրած պատասխանի լրացման վերաբերյալ առարկություններ և հայտնել, որ Երրորդ անձի ներկայացուցչի համոզմամբ «ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ն բաց է թողել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված ժամկետը, ինչը վերջինիս կարծիքով հիմք է հայցի մերժման համար: Երրորդ անձի ներկայացուցիչն անդրադարձել է նաև այն հանգամանքին, որ «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված նորմը սույն գործով կիրառելի չէ:  
Երրորդ անձի ներկայացուցիչը նման եզրահանգման հիմնավորման նկատառումով պատասխանի լրացման մեջ, որպես իրավական հիմք, վկայակոչել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 1-ին և 2-րդ հոդվածներով սահմանված նորմերը:  
Հայցվորը գտնում է, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի մեկնաբանման վերաբերյալ բերված փաստարկներով ցանկանում է նշել, որ սույն գործով կիրառելի է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված նորմը հետևյալ պատճառաբանությամբ:  
Նշված նորմով սահմանված է, որ այն դեպքերում, երբ վարչական մարմնի ընդունած ակտը կամ ակտը չընդունելը կամ գործողություն կատարելը կամ չկատարելը բողոքարկվել է վարչական կարգով, սույն հոդվածով սահմանված ժամկետները հաշվարկվում են բողոքի քննության համար սահմանված ժամկետի ավարտից հետո:  
Նորմի տառացի մեկնաբանության արդյունքում պարզ է դառնում, որ վարչական բողոք ներկայացված լինելու դեպքում առկա է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածով սահմանված իրավադատարեցնող ժամկետների հաշվարկման այլ իրավակարգավորում:  
Տվյալ պարագայում, «ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ն 04.05.2009թ. վիճարկվող որոշումը բողոքարկել է վերադատության կարգով, ընդ որում, դա կատարել է նախքան վիճարկման հայցադիմում ներկայացնելը:  
Վերոհիշյալ դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթը ՀՀ էկոնոմիկայի նախարարի 11.06.2009թ. թիվ 411-Ա հրամանով կարճվել է, այն պատճառաբանությամբ, որ ՀՀ վարչական

դատարանում է գտվում սույն գործը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ եթե ակտը բողոքարկվել է վարչական և դատական կարգով միաժամանակ՝ ապա բողոքը ենթակա է դատական քննության՝ որի դեպքում վարչական մարմնում հարուցված վարույթը կարճվում է.

վարչական բողոքը կարող է բերվել՝ ա) վարչական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից 6 ամսվա ընթացքում, ... դ) գրավոր վարչական ակտում դրա բողոքարկման ժամկետը նշված չլինելու դեպքում՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելու օրվանից մեկ տարվա ընթացքում.

Հայցվորը պնդել է, որ տվյալ պարագայում, վերոգրյալը համադրելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված նորմի հետ, ակնհայտ է, որ 1-ին մասի 1-ին կետով սահմանված երկամսյա ժամկետը «ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ի և դատարանի կողմից չեն խախտվել:

«ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ն 07.12.2009թ. դատարանին է ներկայացրել նաև «Կրեատիվ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Էդուարդ Նահապետյանի ներկայացրած պատասխանի վերաբերյալ իր առարկությունները և հայտնել, որ ներկայացված պատասխանում երրորդ անձի ներկայացուցիչը փորձել է հիմնավորել այն հանգամանքը, որ իրավունք է ունեցել «ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ի անվամբ գրանցված «ԺԼԹԿԺ» ապրանքային նշանի թիվ 13021 գրանցումը անվավեր ճանաչելու դիմում ներկայացնելու համար:

Երրորդ անձի ներկայացուցիչը բառախաղ անելով և հատվածական ներկայացնելով «ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ի՝ սույն գործով հայցադիմումի պատասխանի վերաբերյալ առարկություններում ներկայացված դիրքորոշումը, փորձել է խեղաթուրել վերջինիս իրական դիրքորոշումը:

Մասնավորապես, պատասխանում երրորդ անձը նշել է.

«Օրենսդրորեն ամրագրված չեն «ապրանքային նշանի նկատմամբ ձեռք բերում», «ապրանքային նշանի ծագում» հասկացությունները և դրանք որևէ կերպ չեն առնչվում ապրանքային նշանի ծագման հետ»... «Ապրանքային նշանի ձեռք բերումը ժամանակային առումով նախորդում է ապրանքային նշանի ծագմանը», իմաստ չունեցող արտահայտություն է»:

Եթե երրորդ անձի ներկայացուցիչն ամբողջությամբ ուսումնասիրեր պատասխանի առարկությունները, ապա պետք է հասկանար, որ խոսքը վերաբերում է ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի ծագմանը (գրանցմանը):

Հայտնել է, որ իրենց դիրքորոշումն առ այն, որ ապրանքային նշանի նկատմամբ իրավունքի ձեռք բերումը (դրա մեջ ներառված գործողությունների ամբողջությունը) ժամանակային առումով նախորդում է ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի ծագմանը (գրանցմանը), երրորդ անձի ներկայացուցիչը համարել է անիմաստ, սակայն հենց նույն պատասխանում անդրադարձել է այն գործողություններին, որոնք ժամանակային առումով նախորդում են ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի գրանցմանը: Որպես այդպիսի գործողություններ, վերջինս առանձնացրել է՝

1. հայտի ներկայացումը...
2. գործակալության փորձաքննությունների հարցումներին պատասխանելը,
3. փորձաքննության որոշման հետ չհամաձայնվելու դեպքում բողոքարկումը,
4. ապրանքային նշանի գրանցումը:

Նման դիրքորոշմամբ երրորդ անձի ներկայացուցիչը, ըստ էության, ընդունել է այն հանգամանքը, որ ապրանքային նշանի նկատմամբ իրավունքի ձեռք բերումը՝ որպես գործողությունների ամբողջություն, ժամանակային առումով նախորդում է ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի ծագմանը (գրանցմանը):

Ավելին՝ վերջինիս կողմից առանձնացված գործողությունների ցանկի

մեջ ներառված չէ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության որոշումների (փորձաքննության որոշումներից բացի) բողոքարկումը: Հայցվորը հայտնել է, որ իրենց համոզմամբ ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի ծագմանը (գրանցմանը) նախորդող գործողությունների ցանկի վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու համար պետք է ուսումնասիրության առարկա դարձվեն համապատասխան ոլորտը կարգավորող իրավական ակտերը:

Մասնավորապես, նշված գործողությունների շրջանակը, ըստ էության, սահմանված է «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքով և ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 12.04.2005թ. թիվ 85-Ն հրամանով հաստատված Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման մասին կարգով:

Նշված կարգով ընդհանրապես խոսք չի գնում Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության՝ որևէ այլ սուբյեկտի կողմից ներկայացված հայտի հիման վրա ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի գրանցման վերաբերյալ որոշումների բողոքարկման մասին:

«Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքով ամրագրված չէ որևէ նորմ, որի մեկնաբանության արդյունքում կարելի է եզրահանգել, որ մեկ այլ սուբյեկտի անվամբ գրանցված ապրանքային նշանի վիճարկումը կարելի է համարել ապրանքային նշանի նկատմամբ իրավունքի ձեռք բերում:

Էդուարդ Նահապետյանի կողմից ներկայացված վարչական բողոքը չի կարող մեկնաբանվել որպես ապրանքային նշանի նկատմամբ իրավունքի ձեռք բերման լիազորության իրականացում: Այլ կերպ ասած՝ ապրանքային նշանի նկատմամբ իրավունքի ձեռք բերում հասկացությունը ծավալային առումով իր մեջ չի ներառում վարչական բողոք ներկայացնելու լիազորություն:

«ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ն 07.12.2009թ. դատարանին է ներկայացրել ճանաչման հայցադիմումի պատասխանի վերաբերյալ իր առարկությունները և հայտնել, որ պատասխանում, ըստ էության, հայտնվել է այն դիրքորոշումը, որ Է. Նահապետյանը 26.03.2008թ. լիազորագրի ուժով լիազորված է եղել «Կրեատիվ» ՓԲ ընկերության անունից բողոքարկելու վարչական ակտեր, այդ թվում՝ «ԺԼԹԾԿԺ» գրանցման թիվ 13021 ապրանքային նշանի գրանցումը, քանի որ դա ուղղված է եղել «Կրեատիվ» ՓԲ ընկերության կողմից ապրանքային նշանի նկատմամբ իրավունքի ձեռքբերմանը և ապրանքային նշանի նկատմամբ ցուցահանդեսային առաջնության իրավունքի պահպանմանը:

Պատասխանողը նման եզրահանգման է եկել «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ և 12-րդ հոդվածների համեմատական վերլուծության արդյունքում:

Պատասխանողի նշված դիրքորոշումն առարկայազուրկ է հետևյալ պատճառաբանությամբ:

«Կրեատիվ» ՓԲ ընկերությունը 26.03.2008թ. լիազորագրով է.

Նահապետյանին լիազորել է ներկայացնել իր շահերը ՀՀ տարածքում արդյունաբերական սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքի ձեռք բերման, պահպանության, գործողության մեջ պահելու հետ կապված բոլոր հարցերով: Լիազորագրի տեքստի բառացի մեկնաբանությունից ուղղակիորեն բխում է, որ Է. Նահապետյանը 26.03.2008թ. լիազորագրով ցուցահանդեսային առաջնության իրավունքի պահպանման լիազորություն չի ունեցել:

Է. Նահապետյանի կողմից ներկայացված վարչական բողոքը չի

կարող մեկնաբանվել որպես ապրանքային նշանի նկատմամբ իրավունքի ձեռք բերման լիազորության իրականացում: Այլ կերպ ասած՝ ապրանքային նշանի նկատմամբ իրավունքի ձեռք բերում հասկացությունը ծավալային առումով իր մեջ չի ներառում վարչական բողոք ներկայացնելու լիազորություն:

Նման եզրահանգման համար իրավական հիմք է հանդիսանում «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված նորմը, ըստ որի՝ ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքը ծագում է դրան իրավական պահպանություն տրամադրելու պահից և պատկանում է դրա սեփականատիրոջը: Նորմի բառացի մեկնաբանությունից ուղղակիորեն բխում է, որ ապրանքային նշանի նկատմամբ իրավունքը կարող է ձեռք բերվել դրա գրանցման միջոցով: Այսինքն՝ ապրանքային նշանի ձեռք բերումը (դրա մեջ ներառված գործողությունների ամբողջությունը) ժամանակային առումով նախորդում է ապրանքային նշանի ծագմանը (գրանցմանը): ՀՀ օրենսդրությամբ սահմանված է այն գործողությունների ամբողջությունը, որոնք նախորդում են ապրանքային նշանի նկատմամբ իրավունքի գրանցմանը: Նշված գործողությունների շրջանակը ըստ էության սահմանված է «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքով և ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 12.04.2005թ. թիվ 85-Ն հրամանով հաստատված Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման մասին կարգով: Տվյալ պարագայում, 26.03.2008թ. լիազորագրով Է. Նահապետյանին վերապահված ապրանքային նշանի նկատմամբ իրավունքի ձեռք բերման հետ կապված բոլոր հարցերով «Կրեատիվ» ՓԲ ընկերության շահերի ներկայացման լիազորությունը չի կարող անհիմն տարածական մեկնաբանման ենթարկվել և դրա մեջ չի կարող ներառվել Է. Նահապետյանի կողմից վարչական բողոքների ներկայացման լիազորություն:

Նշված եզրահանգումը հավաստվում է նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 1-ին մասի 3-րդ պարբերությամբ սահմանված նորմով, համաձայն որի՝ եթե դիմումը ներկայացվում է ներկայացուցչի միջոցով, ապա պետք է ներկայացվի նաև օրենքով սահմանված կարգով տրված լիազորագիր:

Նշված նորմից ուղղակիորեն բխում է, որ լիազորված անձը պետք է ունենա հստակ ամրագրված լիազորություն լիազորողի անունից վարչական մարմինին դիմելու համար:

4. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը, Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները  
Լսելով կողմերի բացատրությունները, գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ՝ դատարանը եզրակացրեց, որ հայցը ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ:

Ղատաքնության ընթացքում դատարանը պարզված համարեց գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հետևյալ փաստերը.

- ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության կողմից 10.07.2008թ. «ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ի անվամբ գրանցվել է «ԺԼԹԾԿԺ» բառային ապրանքային նշանը՝ (գրանցման թիվ 13021) 12.11.2007թ. առաջնությամբ:

- «Կրեատիվ» ՓԲԸ-ի կողմից 16.08.2008թ. ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդին բողոք է ներակայացվել «ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ին պատկանող «ԺԼԹԾԿԺ» գրանցման թիվ 13021 բառային ապրանքային նշանի գրանցման դեմ:

- ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդի 2008 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 27/08 որոշման համաձայն՝ «Կրեատիվ» ՓԲԸ-ի բողոքը բավարարել է և «ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ի անվամբ գրանցված «ԺԼԹԿԺ» բառային ապրանքային նշանի գրանցումը (գրանցման թիվ 13021) ամբողջությամբ ձանաչել է անվավեր:

- «ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ի կողմից, որպես «Կրեատիվ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքի առարկություններ, ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդին ներկայացվել է «ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ի և ուկրաինական «Կրեատիվ» ՓԲ ընկերության միջև 14.04.2007թ. կնքված ապրանքային նշանի օգտագործման իրավունքի փոխանցման պայմանագիրը, Կրաստանում տեղի ունեցած ցուցահանդեսի վերաբերյալ պաշտոնական ինտերնետային կայքից քաղվածք, ըստ որի «Կրեատիվ» ՓԲ ընկերությունը որպես ցուցահանդեսի մասնակից նշված է:

- ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդի կողմից կայացված վիճարկվող որոշման համաձայն՝ նշված որոշման կայացման համար հիմք է հանդիսացել հետևյալ հանգամանքը. «Կրեատիվ» ՓԲ ընկերության կողմից հայտարկված «ԺԼԹԿԺ» ապրանքային նշանի համար առկա է ցուցահանդեսային առաջնությունը՝ 04.10.2007 թվականի դրությամբ: Նշված հանգամանքը խորհրդի կողմից ընդունվել է որպես «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված հիմքի առկայություն՝ որպես «ցուցահանդեսային առաջնության թվական»:

- 2007թ. հոկտեմբերի 4-6-ը Կրաստանում տեղի է ունեցել ցուցահանդես, որը կազմակերպել են երկու կազմակերպություններ՝ «ITE Group PLC» և «Iteca Kavkasia» ընկերությունները: Ցուցահանդեսի մասնակցության վերաբերյալ տեղեկատվություն է հրապարակվել ինտերնետային կայքում, կատալոգում:

- «ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ի կողմից 09.02.2009թ. ցուցահանդեսի կազմակերպիչներից «ITE Group PLC» ընկերությանը կատարված հարցմանն ի պատասխան՝ 24.02.2009թ. գրությամբ «ITE Group PLC» ընկերությունը հայտնել է, որ «իրենց մոտ եղած պաշտոնական կատալոգում ցուցահանդեսի մասնակիցների շարքում «Կրեատիվ» անվանմամբ ընկերություն նշված չէ»:

- ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության կողմից 16.12.2008թ. «ԺԼԹԿԺ» ապրանքային նշանի նկատմամբ թիվ 20080303 հայտի հիման վրա գրանցվել է «Կրեատիվ» ՓԲԸ-ի բացառիկ իրավունքը (գրանցման համար՝ 13526):

- «ԺԼԹԿԺ» բառային ապրանքային նշանը «Ինտերոյլ» ՍՊԸ-ի կողմից օգտագործել է ԱՊՀ մի շարք երկրներում՝ Բելառուսիա, Ուկրաինա, Ղազախստան: «ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ի և ուկրաինական «Կրեատիվ» ՓԲ ընկերության միջև 14.04.2007թ. կնքվել է ապրանքային նշանի օգտագործման իրավունքի փոխանցման պայմանագիր, որի համաձայն՝ «ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ն ուկրաինական «Կրեատիվ» ՓԲ ընկերությանը բացառիկ իրավունք է տրամադրել նաև ԱՊՀ երկրներում օգտագործել «ԺԼԹԿԺ» բառային ապրանքային նշանը:

- Կրաստանի Հանրապետության քաղաքացի Վալենտինա Սեմիլետը՝ Կրաստանի Հանրապետությունում վերը նշված ցուցահանդեսի կազմակերպման ժամանակ հանդիսացել է «Իտեկա-Կավկասիա» ՍՊԸ-ի առևտրական նախագծի ղեկավարը: Հայցվորի միջնորդությամբ Վալենտինա Սեմիլետը որպես վկա իրավիրվել և ցուցմունք է տվել դատարանում: Վալենտինա Սեմիլետին դատարանում որպես վկա հարցաքննության ժամանակ հայտնել է, որ «Կրեատիվ» ՓԲԸ-ն նշված ցուցահանդեսին չի մասնակցել, վերջինիս կողմից ապրանքատեսակներ ցուցահանդեսին չեն ներկայացվել: Վկան իր ցուցմունքում նշել է, որ ցուցահանդեսին

մասնակցող ընկերություններից յուրաքանչյուրն ունեցել է իր տաղավարը՝ ցուցահանդեսի տաղավարների նախագծին համապատասխան (նշված տաղավարների նախագիծն առկա է վարչական գործում), որոնց մեջ «Կրեատիվ» ՓԲԸ չի եղել և նրա անունով, նրան հատկացված տաղավար ցուցահանդեսում չի եղել, իրեն նման ընկերություն չի հանդիպել: Վկան իր ցուցմունքով հայտնել է նաև, որ «Կրեատիվ» ընկերությանը տրված վկայականը ըստ էության վկայություն չի կարող դիտվել ընկերության կողմից ցուցահանդեսին մասնակցության համար: Նշված վկայականները տրվել են որպես նվերներ, հուշագրեր: Հայտնել է նաև, որ «Կրեատիվ» ընկերությունը որպես ցուցահանդեսի մասնակից իրեն ցուցահանդեսի ընթացքում երբևէ չի հանդիպել:

«Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «3. Փարիզյան կոնվենցիայի մասնակից պետություններից մեկի տարածքում պաշտոնական կամ պաշտոնապես ճանաչված միջազգային ցուցահանդեսների ցուցանմուշների վրա տեղադրված նշանի առաջնությունը կարող է սահմանվել ցուցահանդեսում ցուցանմուշի բաց ցուցադրումն սկսելու թվականով (ցուցահանդեսային առաջնություն), եթե հայտը լիազոր մարմին է ներկայացվել այդ թվականից վեց ամսվա ընթացքում»:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդի կողմից կայացված վիճարկվող ակտի ընդունման համար ըստ էության հիմք է հանդիսացել այն փաստական հանգամանքը, որ «Կրեատիվ» ՓԲ ընկերությունը մասնակցել է 2007թ. հոկտեմբերի 4-6-ը «ITE Group PLC» և «Itca Kavkasia» ընկերությունների կողմից Կրաստանում (Թբիլիսի, Մետեխի Պալատ Հոտել) կազմակերպած ցուցահանդեսին, ինչն էլ հիմք է հանդիսացել «ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ի կողմից «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված նորմի կիրառման համար (ցուցահանդեսային առաջնություն):

Վերը նշված իրավանորմի մեկնաբանմամբ դատարանը եզրակացնում է, որ «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ցուցահանդեսային առաջնությունը առկա է հետևյալ փաստական հանգամանքների առկայության պայմաններում.

- ցուցահանդեսը պետք է անցկացվի Փարիզյան կոնվենցիայի մասնակից պետություններից մեկի տարածքում, անցկացված ցուցահանդեսը պետք է լինի պաշտոնական կամ պաշտոնապես ճանաչված միջազգային ցուցահանդես: Եվ անձը կարող է օգտվել ցուցահանդեսային առաջնությունից՝ եթե մասնակցել է պաշտոնական կամ պաշտոնապես ճանաչված միջազգային ցուցահանդեսին և այդ դեպքում ցուցանմուշների վրա տեղադրված նշանի առաջնությունը կարող է սահմանվել ցուցահանդեսում ցուցանմուշի բաց ցուցադրումն սկսելու թվականով: Հարկ է նշել նաև, որ վերը նշված իրավանորմի կիրառման համար պարտադիր պայման է ցուցանմուշների վրա ապրանքային նշանի տեղադրված լինելու հանգամանքը և այդ ցուցանմուշների բաց ցուցադրումը: Միաժամանակ, վերոհիշյալ նորմով սահմանվում է ժամկետ, որի ընթացքում կարող է ներկայացվել հայտը, այն է՝ ցուցահանդեսին մասնակցած սուբյեկտը ապրանքային նշանի գրանցման հայտը կարող է ներկայացնել ցուցահանդեսի անցկացման թվականից հետո վեցամսյա ժամկետում:

ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 2005թ. ապրիլի 12-ի թիվ 85-Ն հրամանով հաստատված «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգով» սահմանվել է ցուցահանդեսային առաջնություն սահմանելու հետ կապված վարչական մարմնի և

տնտեսավարող սուբյեկտի փոխհարաբերությունները:  
Նշված կարգի 19-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն. «Օրենքի 6-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն հայտին կցվում են՝ ... 6. օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն ցուցահանդեսային առաջնություն խնդրարկելու դեպքում, հայտին կցվում է այդ պահանջի իսկությունը հաստատող փաստաթուղթը: Նշված փաստաթուղթը կարող է ներկայացվել հայտը գործակալություն ներկայացնելու թվականից երեք ամսվա ընթացքում:  
Ցուցահանդեսային առաջնություն խնդրարկելու մասին հայտատուն պարտավոր է նշել հայտը ներկայացնելիս կամ հայտի ներկայացման թվականից երկու ամսվա ընթացքում:

Հայտատուի կողմից ներկայացված փաստաթուղթը պետք է հաստատի ցուցահանդեսի կարգավիճակը որպես Փարիզյան Կոնվենցիայի մասնակից որևէ պետության տարածքում կազմակերպված պաշտոնական կամ պաշտոնապես միջազգային ճանաչված լինելը և պարունակի ապրանքը ցուցադրող անձի անվանումը, նշանը, դրանով նշված ապրանքների ցանկը, ինչպես նաև ցուցահանդեսում ցուցանմուշների բաց ցուցադրման թվականը:  
Հայտատուի կողմից ներկայացված փաստաթուղթը վավերացվում է տվյալ ցուցահանդեսի վարչական մարմնի կամ կազմկոմիտեի կողմից»:

Սույն կարգի 123-րդ կետի համաձայն. «Օրենքի 7-րդ հոդվածի համաձայն երրորդ և չորրորդ մասերին համապատասխան ցուցահանդեսային առաջնություն խնդրարկելու դեպքում ստուգվում են՝

- 1) օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջների պահպանումը.
- 2) ցուցահանդեսային առաջնության իրավունքը հաստատող՝ սույն կարգի 19-րդ կետի 6-րդ ենթակետով նախատեսված պահանջների համապատասխան ձևակերպված փաստաթղթի առկայությունը.
- 3) հայտատուի կողմից ցուցահանդեսային առաջնության խնդրարկմամբ հայտը ցուցահանդեսում ցուցանմուշի բաց ցուցադրումն սկսելու թվականից 6-ամսյա ժամկետում Գործակալություն ներկայացնելու պայմանի պահպանումը.
- 4) հայտարկվող նշանի համապատասխանությունը ցուցանմուշի վրայի նշանին՝ պայմանով, որ ապրանքները, որոնց համար խնդրարկվում է նշանի գրանցումը, ցուցադրվել են ցուցահանդեսում.
- 5) սույն կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջների պահպանումը ԱՕՄԴ յուրաքանչյուր դասի ապրանքների համար, այսինքն՝ առաջնությունը կարող է սահմանվել ներկայացված հայտում նշված յուրաքանչյուր դասի ապրանքների համար առանձին, պահպանելով սույն կետի 4-րդ ենթակետի պահանջները»:

Վերը նշված կարգի 124-րդ կետի համաձայն. «Սույն կարգի 122-123-րդ կետերի 1-3-րդ ենթակետերում նշված պայմաններից որևէ մեկը հայտատուի կողմից չկատարելու դեպքում, ապրանքային նշանի առաջնությունը սահմանվում է սույն կարգի 120-րդ կետին համապատասխան՝ հայտը Գործակալություն ներկայացնելու թվականով, այդ մասին ծանուցելով հայտատուին:

Նշված կարգի 122-րդ կետի համաձայն. « 122. Օրենքի 7-րդ հոդվածի համաձայն կոնվենցիայով առաջնություն խնդրարկելու դեպքում ստուգվում են՝

- 1) օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջների պահպանումը.
- 2) Փարիզյան Կոնվենցիայի մասնակից պետություն ներկայացված առաջին հայտի պատճենի առկայությունը՝ սույն կարգի 19-րդ կետի 5-րդ ենթակետի նախատեսված պահանջներին համապատասխան: Եթե պատճենը Գործակալություն է ներկայացված հայտի ներկայացման թվականից հետո, ապա ստուգվում է հայտատուի կողմից առաջին հայտի պատճենը հայտի ներկայացման թվականից 3-ամսյա ժամկետում ներկայացնելու պայմանի պահպանումը.
- 3) հայտատուի կողմից կոնվենցիայով առաջնության խնդրարկմամբ

հայտը առաջին հայտի ներկայացման թվականից 6-ամսյա ժամկետում Գործակալություն ներկայացնելու պայմանի պահպանումը»:

Նույն կարգի 123-րդ կետի համաձայն. «Օրենքի 7-րդ հոդվածի համաձայն երրորդ և չորրորդ մասերին համապատասխան ցուցահանդեսային առաջնություն խնդրարկելու դեպքում ստուգվում են՝

1) օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջների պահպանումը.

2) ցուցահանդեսային առաջնության իրավունքը հաստատող՝ սույն կարգի 19-րդ կետի 6-րդ ենթակետով նախատեսված պահանջների համապատասխան ձևակերպված փաստաթղթի առկայությունը.

3) հայտատուի կողմից ցուցահանդեսային առաջնության խնդրարկմամբ հայտը ցուցահանդեսում ցուցանուշի բաց ցուցադրումն սկսելու թվականից 6-ամսյա ժամկետում Գործակալություն ներկայացնելու պայմանի պահպանումը»:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները»:

Վերը նշված իրավանորմերի և ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդի կողմից իրականացված վարչական վարույթի նյութերի, փաստական հանգամանքների համադրմամբ դատարանը եզրակացնում է, որ գործակալության բողոքարկման խորհրդի կողմից վարչարարության իրականացման ժամանակ չեն պահպանվել վերը նշված նորմերի պահանջները:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդն ըստ էության չի գնահատել «ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ի կողմից ցուցահանդեսի կազմակերպիչների ինտերնետային կայքից վերցրած քաղվածքը, որտեղ «Կրեատիվ» ՓԲ ընկերության անվանումն ընդհանրապես նշված չի եղել, որպես ցուցահանդեսի մասնակից: Նման պայմաններում դատարանը եզրակացնում է, որ խախտվել են գործի փաստական հանգամանքների պարզման բազմակողմանիության և լրիվության պահանջները:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը վարույթով գործի բոլոր հանգամանքները բացահայտելու համար չի քննարկել նաև հետևյալ հանգամանքները.

Հաշվի չի առնվել, որ ցուցահանդեսի կազմակերպիչները հանդիսանում են երկու կազմակերպություններ, և հետևաբար «Կրեատիվ» ՓԲ ընկերության կողմից ներկայացված փաստաթուղթը վերը նշված իրավանորմերի պահանջներին համապատասխան, պետք է վավերացված լիներ տվյալ ցուցահանդեսի կազմկոմիտեի կողմից: Նման փաստաթուղթ՝ ցուցահանդեսի կազմկոմիտեի կամ վարչական մարմնի կողմից վավերացմամբ ընդհանրապես չի ներկայացվել խորհրդին: Նշված հանգամանքը խորհրդի կողմից ընդհանրապես անտեսվել է:

Վերը նշված իրավանորմերի դրույթների մեկնաբանմամբ դատարանը եզրակացնում է, որ միայն ցուցահանդեսին որևէ իրավաբանական անձի մասնակցությունը դեռևս բավարար հիմք չէ ցուցահանդեսային առաջնություն խնդրարկելու իրավունքի համար, քանի որ նույն, վերը նշված իրավանորմերի դրույթների համաձայն՝ ցուցահանդեսային առաջնության համար անհարաժեշտ է նաև տվյալ ցուցահանդեսի ընթացքում ցուցանուշի վրա տվյալ նշանի տեղադրումը, ապրանքների բաց ցուցադրումը, մինչդեռ նշված փաստերը հաստատող հիմնավորումներ ըստ էության վարչական մարմնին չեն ներկայացվել:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի

մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի ա/ ենթակետի՝ վարչական ակտն իր բովանդակությամբ պետք է համապատասխանի դրա ընդունման համար օրենքով սահմանված պահանջներին, նշում պարունակի այն բոլոր էական փաստական և իրավաբանական հանգամանքների վերաբերյալ, որոնք վարչական մարմնին հիմք են տվել ընդունելու համապատասխան որոշում:

Նույն հոդվածի 4-րդ մասի «դ», «ե» և «զ» ենթակետերը սահմանում են, որ վարչական ակտը պետք է պարունակի ակտով լուծվող հարցի նկարագրությունը (նկարագրական մաս), ակտի ընդունման հիմնավորումը (պատճառաբանական մաս) և ընդունված որոշման շարադրանքը (եզրափակիչ մաս):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավոր կամ գրավոր հաստատված վարչական ակտը պետք է պարունակի հիմնավորում, որում պետք է նշվեն համապատասխան որոշում ընդունելու բոլոր էական փաստական և իրավական հիմքերը:

Տվյալ պարագայում վիճարկվող ակտում բացակայում են «ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապացույցների հիման վրա հավաստվող էական փաստական հանգամանքների վերաբերյալ հիմնավորումները՝ «Կրեատիվ» ՓԲԸ ընկերության կողմից ցուցահանդեսին չմասնակցելու փաստական հանգամանքի հերքման հիմնավորումը, ցուցանմուշի վրա նշանը տեղադրված լինելու, ցուցանմուշների բաց ցուցադրված լինելու վերաբերյալ հիմնավորումները:

Ղատարանը գտնում է, որ վերը նշված փաստական հանգամանքների պարզումն էական է հանդիսացել, քանի որ ըստ էության հենց այդ փաստերն են հիմք հանդիսացել «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված նորմի կիրառման և վիճարկվող որոշման կայացման համար:

Որոշման պատճառաբանական մասում ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը նշել է՝ «... բողոքարկման խորհուրդը մանրամասն ուսումնասիրել է ներկայացված «Իտեկա Կավկասիա» ՍՊԸ-ի կողմից «Կրեատիվ» ընկերությանը տրված տեղեկանքը և Չորրորդ սննդարդյունաբերության վրացական միջազգային Ինտերֆուդ Ջորջիա 2007 ցուցահանդեսում մասնակցելու վերաբերյալ հավաստագիրը և պարզել, որ դրանք ստորագրված են հենց «Իտեկա Կավկասիա» ՍՊԸ-ի՝ ցուցահանդեսի կազմակերպչի տնօրեն Ղ. Վ. Կոմունադզեի կողմից և որոնք կնքված են «Իտեկա Կավկասիա» ՍՊԸ-ի կնիքով»:

Ղատարանը հետազոտելով սույն վարչական գործով առկա փաստական հանգամանքները, իրավական հիմքերը, վկայի ցուցումները, եզրակացնում է, որ «Կրեատիվ» ՓԲԸ-ն «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով չի մասնակցել վերը նշված ցուցահանդեսին: Վերջինիս մասնակցությունը ցուցահանդեսին, սահմանված կարգին համապատասխան ցուցահանդեսային առաջնություն ստանալու հետ կապված հանգամանքների հաստատման վերաբերյալ ապացույցներ առկա չեն:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի համաձայն. « 1. Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝ ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.

բ) կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում»:

Տվյալ դեպքում ղատարանը վերը նշված փաստական հանգամանքների և իրավական հիմքերի հիման վրա եզրակացնում է, որ վիճարկվող ակտն ընդունվել է, ըստ էության, խորհրդին

	<p>ներկայացված իրականությանը չհամապատասխանող, կեղծ տեղեկությունների հիման վրա:          Հարկ է նշել նաև, որ «ԺԼԹԾԿԺ» ապրանքային նշանի նկատմամբ թիվ 20080303 հայտի հիման վրա «Կրեատիվ» ՓԲԸ-ի բացառիկ իրավունքի գրանցումը ուղղակի պատճառահետևանքային կապի մեջ է գտնվում 04.11.2008թ. թիվ 27/08 որոշման հետ: Եթե 04.11.2008թ. թիվ 27/08 որոշմամբ «ԺԼԹԾԿԺ» ապրանքային նշանի թիվ 13021 գրանցումը անվավեր չճանաչվեր, ապա «ԺԼԹԾԿԺ» ապրանքային նշանի նկատմամբ թիվ 20080303 հայտի հիման վրա «Կրեատիվ» ՓԲԸ-ի բացառիկ իրավունքի գրանցում չէր կատարվի: Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ, 112-115-րդ, 118-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132-րդ հոդվածներով, դատարանը</p> <p><b>Վ Ճ Ռ Ե Ց`</b>          ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության, երրորդ անձ «Կրեատիվ» ՓԲԸ-ի` «Պետական մարմնի ակտն անվավեր ճանաչելու» պահանջի մասին, բավարարել:          Անվավեր ճանաչել ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության գանգատարկման խորհրդի 2008 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 27/08 որոշումը:          Որպես ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության գանգատարկման խորհրդի 2008 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 27/08 որոշման անվավերության հետևանք` անվավեր ճանաչել ՀՀ մտավոր սեփականության գործակալության կողմից` «Կրեատիվ» ՓԲԸ-ի թիվ 20080303 հայտի հիման վրա «ԺԼԹԾԿԺ» ապրանքային նշանի նկատմամբ 16.12.2008թ. կատարված գրանցումը (գրանցման համար` 13526):          Պետական տուրքի հարցը համարել լուծված:          Սույն վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո:          Սույն վճիռի դեմ վճռաբեկ բողոք կարող է բերվել մինչև դրա օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը:          Սույն վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով` պարտապանի հաշվին:</p> <p>ԴԱՏԱՎՈՐ` Ա. ՄԻՐԶՈՅԱՆ</p> <p>ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ: Սույն վճիռը _____ 2010թ. մտել է օրինական ուժի մեջ:</p> <p>ԴԱՏԱՎՈՐ` Ա.ՄԻՐԶՈՅԱՆ</p>
<b>Դատական ակտի ամսաթիվը:</b>	04-03-2010
<b>Գործը, որոշումը հանձնվել է գրասենյակ:</b>	30-03-2010
<b>Էջերի քանակը:</b>	1-ին հատորը 145 թերթից, 2-րդ հատորը` 166 թերթից,

<b>Գործին կից նյութեր:</b>	
<b>Այլ նշումներ:</b>	Կից չհավելված 261թերթից:
<b>Ամսաթիվ:</b>	30-03-2010
<b>Էջերի քանակը:</b>	1հատ.145,2հատ.166
<b>Գործին կից նյութերը:</b>	Կից հավելված 261թերթից
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ամսաթիվ:</b>	02-04-2010
<b>Էջերի քանակը:</b>	1-ին հատորը՝ 145 թերթից, 2-րդ հատորը՝ 166 թերթից, հավելված՝ 261թերթից
<b>Գործին կից նյութերը:</b>	
<b>Որ դատարան է ուղարկվել:</b>	Վճռաբեկ
<b>Ուր է ուղարկվել:</b>	
<b>Ելքի գրության համար:</b>	16624/10
<b>Ամսաթիվ:</b>	13-04-2010
<b>Ամսաթիվ:</b>	15-06-2010
<b>Ամսաթիվ:</b>	15-06-2010
<b>Էջերի քանակը:</b>	3 հատորից՝ 1՝ 145թերթից, 2՝ 166 թերթից, 3՝ 41 թերթից, կից հավելվածը՝ 41 թերթից
<b>Գործին կից նյութերը:</b>	
<b>Այլ նշումներ:</b>	16.06.2010թ.ստացվել է կատարողական թերթ:3 հատորից՝ 1՝ 145թերթից, 2՝ 166 թերթից,3՝ 45 թերթից, կից հավելվածը՝ 41 թերթից:Գործ: 22.06.2010թ. ստացվել է կատ.թերթ:
<b>Պատական Գործ N: ՎԴ/2075/05/09</b>	
<b>Ամսաթիվ:</b>	31-03-2010
<b>Բողոք բերող անձը</b>	
<b>Անուն:</b>	Կրեատիվ ՓԲԸ
<b>Հասցե:</b>	Երևան
<b>Պետական տուրք:</b>	20000
<b>Պատասխանի ստացման ամսաթիվը:</b>	20-04-2010
<b>Պատասխան բերող անձը</b>	
<b>Անուն:</b>	ԻՆՏԵՐՕՅԼ ՍՊԸ
<b>Հասցե:</b>	Մոսկովյան, մարզ, Լենինսկի շ., Կալուժսկոյե մայրուղի 21 կմ
<b>Ներկայացուցիչ</b>	

Անուն	Արա
Ազգանուն	Զոհրաբյան
Հասցե	Երևան, Արշակունյաց 17
<b>Բողոքարկվող դատական ակտը:</b>	պետական մարմնի ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին
<b>Գործի համարը:</b>	ՎԴ/2075/05/09
<b>Ում կողմից է բերվել բողոքը:</b>	3-րդ անձ
<b>Գործի ստացման ամսաթիվը:</b>	13-04-2010
<b>Էջերի քանակը:</b>	145թ.
<b>Գործին կից փաստաթղթերը:</b>	2-166թ.
<b>Վճռաբեկ վարույթի համարը:</b>	ՎԴ/2075/5/09
<b>Ամսաթիվ:</b>	13-04-2010
<b>Նախագահող դատավոր</b>	
Դատարանի անվանում:	Վճռաբեկ
Դատավորի անուն:	Արտակ Հակոբի Բարսեղյան
<b>Դատավոր</b>	
Դատարանի անվանում:	Վճռաբեկ
Դատավորի անուն:	
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ամսաթիվ:</b>	12-05-2010
<b>Որոշման բովանդակությունը:</b>	<p>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ  ՀՀ վարչական դատարանի վճիռ Վարչական գործ թիվ  ՎԴ/2075/05/09  Վարչական գործ թիվ ՎԴ/2075/05/09 2010թ.  Նախագահող դատավոր՝ Ա. Միրզոյան  Ո Ր Ո Շ ՈՒ Մ  ՎՃՌԱԲԵԿ ԲՈՂՈՔԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ  «12» մայիսի 2010թ. ք. Երևան  Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի  քաղաքացիական  և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),  նախագահությամբ  մասնակցությամբ դատավորներ</p> <p>Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ  Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ</p>

**Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ**

քննարկելով ըստ հայցի <<ԻՆՏԵՐՕՅԼ>> ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ << Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության (այսուհետ՝ Գործակալություն), երրորդ անձ <<Կրեատիվ>> ՓԲԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ պետական մարմնի ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին, վարչական գործով << վարչական դատարանի 04.03.2010 թվականի վճռի դեմ Կազմակերպության ներկայացուցիչ Լիանա Յորդանյանի բերած վճռաբեկ բողոքը քննության ընդունելու հարցը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

1. Գործի դատավարական նախապատմությունը Դիմելով դատարան՝ Ընկերությունը հայտնել է, որ մինչ <<ՃԻՅԻՈԵ>> բառային ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում գրանցելը, Ընկերությունն այն գրանցել և օգտագործել է ԱՊՀ այլ երկրներում: Ընկերության և Կազմակերպության միջև 14.04.2007 թվականին կնքվել է ապրանքային նշանի օգտագործման իրավունքի փոխանցման պայմանագիր, որով Ընկերությունը Կազմակերպությանը նաև բացառիկ իրավունք է տրամադրել գրանցել և օգտագործել ԱՊՀ երկրներում <<ՃԻՅԻՈԵ>> ապրանքային նշանը: 10.07.2008 թվականին Գործակալության կողմից Ընկերության անվամբ գրանցվել է վերոնշյալ ապրանքային նշանը 12.11.2007 թվականի առաջնությամբ: Կազմակերպությունը 16.08.2008 թվականին Գործակալության բողոքարկման հանձնաժողովին ներկայացրել է բողոք՝ Ընկերությանը պատկանող թիվ 13021 բառային ապրանքային նշանի գրանցման դեմ: Գործակալության բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) 04.11.2008 թվականի թիվ 27/08 որոշմամբ Կազմակերպության բողոքը բավարարել է և Ընկերության անվամբ գրանցված թիվ 13021 բառային ապրանքային նշանի գրանցումն անվավեր ճանաչել: Սույն որոշման հետևանքով ապրանքային նշանի նկատմամբ թիվ 20080303 հայտի հիման վրա 16.12.2008 թվականին գրանցվել է Կազմակերպության բացառիկ իրավունքը: Պատճառաբանելով, որ ապրանքային նշանի նկատմամբ թիվ 20080303 հայտի հիման վրա 16.12.2008 թվականին Կազմակերպության անվամբ կատարված գրանցումն ուղղակի պատճառահետևանքային կապի մեջ է գտնվում 04.11.2008 թվականի թիվ 27/08 որոշման հետ, իսկ նշված որոշումն ընդունվել է օրենսդրության պահանջների խախտումներով, պահանջել է անվավեր ճանաչել Գործակալության 04.11.2008 թվականի թիվ 27/08 որոշումը և որպես հետևանք՝ վերացնել Կազմակերպության 16.12.2008 թվականի ապրանքային նշանի գրանցումը: << վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 04.03.2010 թվականի վճռով հայցը բավարարվել է: Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կազմակերպության ներկայացուցիչը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը Վճռաբեկ բողոքը բերվել է նյութական և դատավարական իրավունքի խախտումների հիմքով: Բողոքում պատճառաբանվել է, որ Դատարանը խախտել է << Սահմանադրության 22-րդ հոդվածը, << վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասը, << քաղաքացիական դատավարության օրենսգրքի 23-րդ, 24-րդ, 28-րդ, 31-րդ, 33-րդ, 86-րդ հոդվածները, 130-րդ հոդվածի 1-ին կետը, 132-րդ հոդվածի 3-րդ կետը, սխալ է մեկնաբանել << առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 12.04.2005 թվականի թիվ 85-Ն հրամանով հաստատված ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման

կարգի (այսուհետ՝ Կարգ) 19-րդ կետի 6-րդ ենթակետը:  
Բողոք բերած անձը սույն վճռաբեկ բողոքը քննության ընդունելու հարցը պատճառաբանում է հետևյալ հիմնավորումներով.  
Ղատարանի կողմից թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, ինչպես նաև Ղատարանի վճիռն առերևույթ հակասում է ՀՀ վճռաբեկ դատարանի նախկինում ընդունած որոշմանը:  
Բողոք բերած անձը նշված հիմնավորումները պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.  
ՀՀ վճռաբեկ դատարանը 31.10.2008 թվականի թիվ ՎՂ2/0083/05/08 որոշմամբ անդրադառնալով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-րդ, 132-րդ հոդվածների մեկնաբանությանը, նշել է, որ Ղատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վճիռ կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժում, այսինքն՝ դատարանը պետք է պատճառաբանի ապացույցները ոչ բավարար համարելու վերաբերյալ իր դիրքորոշումը: Ղատարանն անտեսելով Կազմակերպության կողմից ներկայացված թիվ 18 ապացույցները՝ հարկ չի համարել ուսումնասիրել և դրանց վերաբերյալ տալ իրավական գնահատական: Ղատարանի նման վարքագծի պարագայում գործի մասնակցի ապացույց ներկայացնելու իրավունքը կրում է ձևական բնույթ:  
Ղատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Կազմակերպության կողմից ներկայացված բոլոր փաստաթղթերը Կարգի 19-րդ կետի 6-րդ ենթակետի պահպանմամբ ստորագրվել են ցուցահանդեսի կազմակերպիչ ՀՀ Իտեկա Կավկասիա>> ՍՊԸ-ի տնօրենի կողմից և վավերացվել ՀՀ Իտեկա Կավկասիա>> ՍՊԸ-ի կնիքով: Մինչդեռ Ղատարանը եկել է այն սխալ եզրահանգման, որ Կազմակերպության կողմից ներկայացված փաստաթղթերն ընդհանրապես վավերացված չեն եղել ցուցահանդեսի կազմակերպչի կամ վարչական մարմնի կողմից:  
Ղատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվորեն չի հետազոտել գործում առկա ապացույցները: Մասնավորապես՝ Կազմակերպությանը տրված ցուցահանդեսի մասնակցի վկայականը, ՀՀ Իտեկա Կավկասիա>> ՍՊԸ-ի կողմից տրված 07.02.2008 թվականի թիվ 08/92 և 08/93 տեղեկանքներն առ այն, որ Կազմակերպությունը մասնակցել է ցուցահանդեսին, 14.02.2008 թվականի թիվ 08/10 գրությունը: Փոխարենը Ղատարանը, որպես ապացույց, հիմք է ընդունել ՀՀ Իտեկա Կավկասիա>> ՍՊԸ-ի առևտրական նախագծի ղեկավար՝ վկա Վալենտինա Սեմիլետի ցուցմունքները: Ղատարանն անտեսելով Կազմակերպության կողմից ներկայացված բազում ապացույցները՝ եզրակացրել է, որ Գործակալության բողոքարկման խորհուրդն ըստ էության չի գնահատել Ընկերության կողմից ցուցահանդեսի կազմակերպիչների ինտերնետային կայքից վերցված քաղվածքը և, որ Կազմակերպությունը ցուցահանդեսին չի մասնակցել: Ղատարանը հաշվի չի առել նաև այն հանգամանքը, որ ԱՊՀ-ի մի շարք երկրների, այդ թվում ցուցահանդեսի անցկացման երկրի՝ Վրաստանի մտավոր սեփականության հարցերով ազգային կենտրոնը Կազմակերպության համար ճանաչել է ցուցահանդեսային առաջնություն 04.10.2007 թվականը՝ գրանցելով ապրանքային նշանը Կազմակերպության անվամբ:  
Ղատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի պահանջը, քանի որ վկային հարցաքննելու միջնորդությունը ներկայացվել է հենց վկայի դատական նիստերի դահլիճում ներկա լինելու ժամանակ: Ղատարանը չպարզելով ապացուցում պահանջվող փաստերի շրջանակը և չբաշխելով ապացուցման բեռը, նախնական դատական նիստի ժամանակ

որոշել է, որ Վալենտինա Սեմիլետին հայտնի են կամ կարող են հայտնի լինել տվյալ գործին վերաբերող փաստական հանգամանքներ, հարցաքննել է վերջինիս՝ խախտելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 30-րդ և 86-րդ հոդվածի պահանջները: Ղատարանը նաև երրորդ անձին գրկել է վկային հարցեր տալու օրենսդրությամբ ամրագրված իրավունքից: Ղատարանն անտեսելով այն հանգամանքը, որ Ընկերությունը բաց է թողել օրենսդրությամբ սահմանված վիճարկման հայց ներկայացնելու երկամսյա ժամկետը, ինչպես նաև այդ կապակցությամբ Կազմակերպության ներկայացրած առարկությունները՝ հայցն ընդունել է վարույթ: Ղատարանի վճիռն առերևույթ հակասում է ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 31.10.2008 թվականի թիվ ՎԴ2/0083/05/08 որոշմանը: Բողոք բերած անձը պահանջել է բեկանել Ղատարանի 04.03.2010 թվականի վճիռը և այն փոփոխել՝ հայցը մերժել:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանը, քննարկելով բողոք բերած անձի հիմնավորումը՝ վճռաբեկ բողոքը քննության ընդունելու մասին, գտնում է, որ վճռաբեկ բողոքը ենթակա է վերադարձման հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանի դատական ակտերի վճռաբեկ դատարան բողոքարկման կարգի և գործերի վարույթի վրա տարածվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե վճռաբեկ բողոքը չի համապատասխանում նույն օրենսգրքի 231-րդ հոդվածի և 234-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերի համաձայն՝ վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է քննության, եթե վճռաբեկ դատարանի կարծիքով բողոքում հիմնավորված է, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, կամ վերանայվող դատական ակտն առերևույթ հակասում է վճռաբեկ դատարանի նախկինում ընդունած որոշումներին, կամ ստորադաս դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված է, որ վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է քննության, եթե բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, կամ վերանայվող դատական ակտն առերևույթ հակասում է վճռաբեկ դատարանի նախկինում ընդունած որոշումներին, կամ դատարանը թույլ է տվել նյութական կամ դատավարական իրավունքի խախտում:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ղատարանի կողմից թույլ տրված դատական սխալի՝ նյութական և դատավարական իրավունքի խախտումների, մասին բողոք բերած անձի հիմնավորումը հերքվում է Ղատարանի վճռում նշված պատճառաբանություններով:

Այսպես, Ղատարանը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան, զնահատելով գործում առկա ապացույցները, պարզելով գործի համար նշանակություն ունեցող հանգամանքները և կիրառելով սույն գործով կիրառման ենթակա օրենքները, վճիռ կայացնելիս

պատճառաբանել է, որ «Հայցվորի միջնորդությամբ Վալենտինա Սեմիլետը որպես վկա հրավիրվել և ցուցմունք է տվել դատարանում: Վալենտինա Սեմիլետին դատարանում որպես վկա հարցաքննության ժամանակ հայտնել է, որ «Կրեատիվ» ՓԲԸ-ն նշված ցուցահանդեսին չի մասնակցել, վերջինիս կողմից ապրանքատեսակներ ցուցահանդեսին չեն ներկայացվել: Վկան իր ցուցմունքում նշել է, որ ցուցահանդեսին մասնակցող ընկերություններից յուրաքանչյուրն ունեցել է իր տաղավարը՝ ցուցահանդեսի տաղավարների նախագծին համապատասխան (նշված տաղավարների նախագիծն առկա է վարչական գործում), որոնց մեջ «Կրեատիվ» ՓԲԸ չի եղել և նրա անունով, նրան հատկացված տաղավար ցուցահանդեսում չի եղել, իրեն նման ընկերություն չի հանդիպել: Վկան իր ցուցմունքով հայտնել է նաև, որ «Կրեատիվ» ընկերությանը տրված վկայականը ըստ էության վկայություն չի կարող դիտվել ընկերության կողմից ցուցահանդեսին մասնակցության համար: Նշված վկայականները տրվել են որպես նվերներ, հուշագրեր»:

Դատարանը վերլուծելով «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, պատճառաբանելով, որ «Փարիզյան կոնվենցիայի մասնակից պետություններից մեկի տարածքում պաշտոնական կամ պաշտոնապես ճանաչված միջազգային ցուցահանդեսների ցուցանմուշների վրա տեղադրված նշանի առաջնությունը կարող է սահմանվել ցուցահանդեսում ցուցանմուշի բաց ցուցադրումն սկսելու թվականով (ցուցահանդեսային առաջնություն), եթե հայտը լիազոր մարմին է ներկայացվել այդ թվականից վեց ամսվա ընթացքում», «ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդի կողմից կայացված վիճարկվող ակտի ընդունման համար ըստ էության հիմք է հանդիսացել այն փաստական հանգամանքը, որ «Կրեատիվ» ՓԲԸ ընկերությունը մասնակցել է 2007թ. հոկտեմբերի 4-6-ը «ITE Group PLC» և «Iteca Kavkasias» ընկերությունների կողմից Կրաստանում (Թբիլիսի, Մետեխի Պալատ Հոտել) կազմակերպած ցուցահանդեսին, ինչն էլ հիմք է հանդիսացել «ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ի կողմից «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված նորմի կիրառման համար», գտել է, որ «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ցուցահանդեսային առաջնությունն առկա է հետևյալ փաստական հանգամանքների առկայության պայմաններում. - ցուցահանդեսը պետք է անցկացվի Փարիզյան կոնվենցիայի մասնակից պետություններից մեկի տարածքում, անցկացված ցուցահանդեսը պետք է լինի պաշտոնական կամ պաշտոնապես ճանաչված միջազգային ցուցահանդես: Եվ անձը կարող է օգտվել ցուցահանդեսային առաջնությունից՝ եթե մասնակցել է պաշտոնական կամ պաշտոնապես ճանաչված միջազգային ցուցահանդեսին և այդ դեպքում ցուցանմուշների վրա տեղադրված նշանի առաջնությունը կարող է սահմանվել ցուցահանդեսում ցուցանմուշի բաց ցուցադրումն սկսելու թվականով: Հարկ է նշել նաև, որ վերը նշված իրավանորմի կիրառման համար պարտադիր պայման է ցուցանմուշների վրա ապրանքային նշանի տեղադրված լինելու հանգամանքը և այդ ցուցանմուշների բաց ցուցադրումը: Միաժամանակ, վերոհիշյալ նորմով սահմանվում է ժամկետ, որի ընթացքում կարող է ներկայացվել հայտը, այն է՝ ցուցահանդեսին մասնակցած սուբյեկտը ապրանքային նշանի գրանցման հայտը կարող է ներկայացնել ցուցահանդեսի անցկացման թվականից հետո վեցամսյա ժամկետում»:

Այնուհետև վերլուծելով ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 85-Ն հրամանով հաստատված «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգը» պատճառաբանել է, որ «ցուցահանդեսային առաջնություն

խնդրարկելու դեպքում, հայտին կցվում է այդ պահանջի իսկությունը հաստատող փաստաթուղթը: Նշված փաստաթուղթը կարող է ներկայացվել հայտը գործակալություն ներկայացնելու թվականից երեք ամսվա ընթացքում: Ցուցահանդեսային առաջնություն խնդրարկելու մասին հայտատուն պարտավոր է նշել հայտը ներկայացնելիս կամ հայտի ներկայացման թվականից երկու ամսվա ընթացքում: Հայտատուի կողմից ներկայացված փաստաթուղթը պետք է հաստատի ցուցահանդեսի կարգավիճակը որպես Փարիզյան Կոնվենցիայի մասնակից որևէ պետության տարածքում կազմակերպված պաշտոնական կամ պաշտոնապես միջազգային ճանաչված լինելը և պարունակի ապրանքը ցուցադրող անձի անվանումը, նշանը, դրանով նշված ապրանքների ցանկը, ինչպես նաև ցուցահանդեսում ցուցանուշների բաց ցուցադրման թվականը: Հայտատուի կողմից ներկայացված փաստաթուղթը վավերացվում է տվյալ ցուցահանդեսի վարչական մարմնի կամ կազմկոմիտեի կողմից», նշված Կարգի 122-րդ-124-րդ կետերի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությամբ և Գործակալության բողոքարկման խորհրդի կողմից իրականացված վարչական վարույթի նյութերի, փաստական հանգամանքների համադրմամբ պատճառաբանել է, որ «գործակալության բողոքարկման խորհրդի կողմից վարչարարության իրականացման ժամանակ չեն պահպանվել վերը նշված նորմերի պահանջները», «ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդն ըստ էության չի գնահատել «ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ի կողմից ցուցահանդեսի կազմակերպչների ինտերնետային կայքից վերցրած քաղվածքը, որտեղ «Կրեատիվ» ՓԲ ընկերության անվանումն ընդհանրապես նշված չի եղել, որպես ցուցահանդեսի մասնակից»: Նման պայմաններում Ղատարանը եզրակացրել է, որ «խախտվել են գործի փաստական հանգամանքների պարզման բազմակողմանիության և լրիվության պահանջները: ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը վարույթով գործի բոլոր հանգամանքները բացահայտելու համար չի քննարկել նաև հետևյալ հանգամանքները. Հաշվի չի առնվել, որ ցուցահանդեսի կազմակերպիչները հանդիսանում են երկու կազմակերպություններ, և հետևաբար «Կրեատիվ» ՓԲ ընկերության կողմից ներկայացված փաստաթուղթը վերը նշված իրավանորմերի պահանջներին համապատասխան, պետք է վավերացված լիներ տվյալ ցուցահանդեսի կազմկոմիտեի կողմից: Նման փաստաթուղթ՝ ցուցահանդեսի կազմկոմիտեի կամ վարչական մարմնի կողմից վավերացմամբ ընդհանրապես չի ներկայացվել խորհրդին: Նշված հանգամանքը խորհրդի կողմից ընդհանրապես անտեսվել է», «միայն ցուցահանդեսին որևէ իրավաբանական անձի մասնակցությունը դեռևս բավարար հիմք չէ ցուցահանդեսային առաջնություն խնդրարկելու իրավունքի համար, քանի որ նույն, վերը նշված իրավանորմերի դրույթների համաձայն՝ ցուցահանդեսային առաջնության համար անհարաժեշտ է նաև տվյալ ցուցահանդեսի ընթացքում ցուցանուշի վրա տվյալ նշանի տեղադրումը, ապրանքների բաց ցուցադրումը, մինչդեռ նշված փաստերը հաստատող հիմնավորումներ ըստ էության վարչական մարմնին չեն ներկայացվել: Վերլուծելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 57-րդ հոդվածները՝ գտել է, որ «վիճարկվող ակտում բացակայում են «ԻՆՏԵՐՕՅԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապացույցների հիման վրա հավաստվող էական փաստական հանգամանքների վերաբերյալ հիմնավորումները՝ «Կրեատիվ» ՓԲԸ-ի կողմից ցուցահանդեսին չմասնակցելու փաստական հանգամանքի հերքման հիմնավորումը, ցուցանուշի վրա նշանը տեղադրված լինելու, ցուցանուշների բաց ցուցադրված լինելու վերաբերյալ հիմնավորումները», «ըստ էության հենց այդ փաստերն են հիմք հանդիսացել «Ապրանքային և սպասարկման նշանների,

ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված նորմի կիրառման և վիճարկվող որոշման կայացման համար: Որոշման պատճառաբանական մասում ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը նշել է՝ «... բողոքարկման խորհուրդը մանրամասն ուսումնասիրել է ներկայացված «Իտեկա Կավկասիա» ՍՊԸ-ի կողմից «Կրեատիվ» ընկերությանը տրված տեղեկանքը և Չորրորդ սննդարդյունաբերության վրացական միջազգային Ինտերֆուդ Ջորջիա 2007 ցուցահանդեսում մասնակցելու վերաբերյալ հավաստագիրը և պարզել, որ դրանք ստորագրված են հենց «Իտեկա Կավկասիա» ՍՊԸ-ի՝ ցուցահանդեսի կազմակերպչի տնօրեն Ղ. Վ. Կոնունադզեի կողմից և որոնք կնքված են «Իտեկա Կավկասիա» ՍՊԸ-ի կնիքով>>: Դատարանը հետազոտելով սույն վարչական գործով առկա փաստական հանգամանքները, իրավական հիմքերը, վկայի ցուցումները, եզրակացրել է, որ ՀՀ «Կրեատիվ» ՓԲԸ-ն «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով չի մասնակցել վերը նշված ցուցահանդեսին: Վերջինիս մասնակցությունը ցուցահանդեսին, սահմանված կարգին համապատասխան ցուցահանդեսային առաջնություն ստանալու հետ կապված հանգամանքների հաստատման վերաբերյալ ապացույցներ առկա չեն>>, հետևաբար ՀՀ վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի համաձայն՝ վիճարկվող ակտն ընդունվել է, ըստ էության, Գործակալության բողոքարկման խորհրդին ներկայացված իրականությանը չհամապատասխանող, կեղծ տեղեկությունների հիման վրա>>: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը «Մելտեքս» ՍՊԸ-ն և Մեսրոպ Մովսիսյանն ընդդեմ Հայաստանի (զանգատ թիվ 32283/04) գործով 17.06.2008 թվականի վճռով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանվածության վերաբերյալ, արտահայտել է իր իրավական դիրքորոշումն այն մասին, որ «Վճռաբեկ դատարանի իրավասությունն սահմանափակվում էր միայն իրավունքի հարցերի ուսումնասիրմամբ: Նման հանգամանքներում չի կարելի ասել, որ Վճռաբեկ դատարանը չէր նշել հիմնավորում այն պատճառով, որ այն հաստատել էր ավելի ցածր ատյանի դատարանի եզրահանգումները և ներառել էր դրանք իր որոշումների մեջ>>: Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոք բերած անձը վճռաբեկ բողոքում չի հիմնավորել նաև բողոքում նշված դրույթների միատեսակ կիրառության համար Վճռաբեկ դատարանի սույն գործով որոշման էական նշանակություն ունենալու հանգամանքը, իսկ վիճարկվող դատական ակտը չի հակասում ՀՀ վճռաբեկ դատարանի նախկինում ընդունած վճռաբեկ բողոքում նշված որոշմանը, քանի որ սույն գործի և վճռաբեկ բողոքում նշված որոշման գործի փաստական հանգամանքները նույնական չեն: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 226-րդ հոդվածի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.3-րդ հոդվածի համաձայն՝ վճռաբեկ բողոք բերելու հիմքերն են դատական սխալը՝ նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտումը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, նոր երևան եկած կամ նոր հանգամանքները: Նման պայմաններում վճռաբեկ բողոքը քննության ընդունելու վերաբերյալ բողոք բերած անձի հիմնավորումները՝ դատական սխալ թույլ տալու, օրենքի միատեսակ կիրառության համար Վճռաբեկ դատարանի որոշման էական նշանակություն ունենալու և վերանայվող դատական ակտը ՀՀ վճռաբեկ դատարանի նախկինում ընդունած որոշմանն առերևույթ հակասելու մասին, անհիմն են, քանի որ տվյալ դեպքում հիմնավորված չէ նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտման առկայությունը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը չի համապատասխանում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին կետի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին: Հետևաբար, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն, այն ենթակա է վերադարձման:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ և 234-րդ հոդվածներով, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ և 118.6-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վերադարձնել թիվ ՎԴ/2075/05/09 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 04.03.2010 թվականի վճռի դեմ <<Կրեատիվ>> ՓԲԸ-ի ներկայացուցչի բերած վճռաբեկ բողոքը:
2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

- Նախագահող՝
- Դատավորներ՝
- Ս. ՍԱՐԳՍՅԱՆ
- Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
- Վ. ԱԲԵԼՅԱՆ
- Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
- Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ
- Մ. ԴՐՄԵՅԱՆ
- Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ
- Է. ՀԱՅՐԻՅԱՆ
- Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
- Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

<b>Ամսաթիվ:</b>	27-05-2010
<b>Գործի առաքման ամսաթիվը:</b>	11-06-2010
<b>Դատարան:</b>	Վարչական
<b>Այլ նշումներ:</b>	3 հատոր, կից հավելվածը 261թ.: